Նախագծի տվյալ բաժինը կազմված է ճարտարապետա-շինարարական գծագրերի և գործող շինարարական նորմերի հիման վրա:

Կլիմայական տվյալներն են ձմռանը՝ ջեռուցման համար հաշվարկային ջերմաստիճանը t_H=-19^{O}C , ջեռուցման ժամանակաշրջանի միջին ջերմաստիճանը +1^{O}C, ջեռուցման ժամանակաշրջանիտևողությունը 159 օր:Ամռանը արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանը t=+35°C: Ամռան ընթացքում ներքին ջերմաստիճանը ընդունվում է +22°C ԻՑ +25°C:

1. ՋԵՌՈՒՑՈՒՄ

Ջեռուցման աղբյուր է հանդիսանում պատի 2 կաթսա, որոնք գտնվում են երկրորդ հարկում: Ջերմատարը ջուր է: Մատակարար ջրի ջերմաստիճանը ընդունված է +80°C, հետադարձինը՝ +60°C:

Որպես հիմնական ջեռուցման սարքեր ընտրված են ֆանկոյլներ: Ջեռուցման համար նախատեսված են 2 հատ պատի մոնտաժման գազային կաթսա 50 կՎտ և 36 կՎտ (պահուստային):

2. ՀՈՎԱՑՈՒՄ

Հովացման աղբյուր է հանդիսանում 60 կՎտ հովացման հզորությամբ չիլլերը:

Գծեց	Ա. Հարությունով			1-013-25 ՋՕ		
				«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Թբիլիսյան խճուղի 43/2 հասցեում գտնվող շենքի հիմնանորոգում		
				Ջեռուցում	Փուլ	Թերթ	Թերթեր
					ԱՆ	1	7
Պաշտոն	ԱԱՀ	Ստորագ.				
			2025	Ընդհանուր տվյալներ	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ	

Ջեռուցում

N	Անվանումը	Չափմ. միավ.	Քանակ	Ծանոթություն
1	Խողովակ PPR ջեռուցման համար փորձարկումով Труба PPR для отопления с испытанием Ø63 Ø50 Ø40 Ø32 Ø25 Ø20	մ	 68.0 36.0 40.0 40.0 76.0 216.0	
2	Ֆանկոյլ բաց մոնտաժումով 2կՎտ սառեցման հզորությամբ Фанкойл открытого монтажа, холодопроизводительность 2 кВт	Հատ	37	
3	Ֆանկոյլի մոնտաժման կոմպլեկտ Комплект для монтажа фанкойла	Կոմպլ.	37	
4	Ֆանկոյլի պաշտպանիչ վահանակ Дефлектор для фанкойла	Հատ	37	
5	Ընդարձակիչ անոթ 100լ Расширительный бак 100 л	Հատ	1	
6	Չիլլեր 60կՎտ սառեցման հզորությամբ Чиллер с холодопроизводительностью 60 кВт	Հատ	1	
7	Մետաղական կոնստրուկցիաների ամրացում Крепление металлических конструкций	կգ	300	
8	Արտածման առանցքային օդամղիչ 100 մ³/ժ Осевой вытяжной вентилятор 100 м³/ч	Հատ	30	
9	Ճաղավանդակ արտածման օդամուղի համար Решетка для вентканала	Հատ	30	
10	Անցքի բացում Ø110, 0.35մ խորությամբ Прорезка отверстия диаметром 110 мм, глубиной 0.35 м	Հատ	30	
11	PPR ձևավոր մասեր - անկյունակներ 90° Фитинги PPR — угольники 90° Ø63 Ø50 Ø40 Ø32 Ø25 Ø20	Հատ	 30 10 5 5 10 25	
12	PPR ձևավոր մասեր – Եռաբաշխիկներ Фитинги PPR — тройники 63x63x63 63x50x63 63x40x63 50x50x50 50x20x50 40x20x40 32x25x32 32x20x32 25x25x25 25x20x25	Հատ	 6 6 4 1 4 10 16 2 12 2 16	
13	PPR ձևավոր մասեր - անցումներ Фитинги PPR — переходник 63/50 63/40 50/40 50/25 50/20 40/32 32/25 25/20	Հատ	 6 2 4 2 2 4 14	
14	PPR ձևավոր մասեր - կցորդիչներ Фитинги PPR — муфты Ø63 Ø50 Ø40 Ø32 Ø25 Ø20	Հատ	 15 10 10 10 20 55	
15	Պատին ամրացվող գազային կաթսա 50 կՎտ Настенный газовый котёл мощностью 50 кВт	Հատ	1	
16	Պատին ամրացվող գազային կաթսա 36 կՎտ Настенный газовый котёл мощностью 36 кВт	Հատ	1	
17	Ծխատար համառանցք խողովակ Ø110 Дымоходная коаксиальная труба Ø110 мм	Հատ/մ	2 /4.0	
18	Անցքի բացում ծխատարի համար 110 մմ Прорезка отверстия для дымохода диаметром 110 мм	Հատ	2	
19	Շրջանառող պոմպ H=10մ, G=3.5մ³/ժ Циркуляционный насос H=10м, G=3.5м³/ч	Հատ	3	
20	Խողովակ PPR կոնդենսատի հեռացման համար փորձարկումով Ø32 Труба PPR для отвода конденсата с испытанием Ø32	մ	90	
21	Փական 2'' M/F Клапан (или вентиль) 2'' M/F	Հատ	4	
22	Փական 1 1/2'' ամերիկանկա Кран американка 1 1/2''	Հատ	6	
23	Փական 1'' M/F Клапан (или вентиль) 1'' M/F	Հատ	5	
24	Փական 3/4'' Кран шаровый 3/4''	Հատ	111	
25	Փական 1/2'' M/F Кран шаровый 1/2'' M/F	Հատ	77	
26	Հակադարձ փական 1 1/2'' Обратный клапан 1 1/2''	Հատ	3	
27	Երկքայլ կարգավորիչ փական 1/2'' Двухходовой регулирующий клапан 1/2''	Հատ	37	
28	Զտիչ 1 1/2'' F Фильтр 1 1/2''F (с внутренней резьбой)	Հատ	3	
29	Զտիչ 1'' F Фильтр 1''F (с внутренней резьбой)	Հատ	2	
30	Զտիչ 3/4'' F Фильтр 3/4''F (с внутренней резьбой)	Հատ	37	
31	Ավտոմատ օդահան 1/2'' M Автоматический воздухоотводчик 1/2'' M	Հատ	38	
32	Քանդովի անցում 1'' ամերիկանկայով Разъёмное соединение 1'' с «американкой»	Հատ	4	
33	Նիպպել 1 1/2'' Ниппель 1 1/2''	Հատ	6	
34	Անցում PPR63x2 '' M Переходник PPR63x2 '' M	Հատ	4	
35	Անցում PPR63x2 '' F Переходник PPR63x2 '' F	Հատ	4	
36	Անցում PPR50x1 1/2 '' M Переходник PPR50x1 1/2 '' M	Հատ	6	
37	Անցում PPR40x1'' M Переходник PPR40x1'' M	Հատ	4	
38	Անցում PPR32x1 '' M Переходник PPR32x1 '' M	Հատ	1	
39	Անցում PPR20x3/4'' M Переходник PPR20x3/4 '' M	Հատ	74	

Գծեց	Ա. Հարությունով			1-013-25 ՋՕ
				«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Թբիլիսյան խճուղի 43/2 հասցեում գտնվող շենքի հիմնանորոգում
				Ջեռուցում — Փուլ: ԱՆ; Թերթ: 2; Թերթեր: 7
Պաշտոն	ԱԱՀ	Ստորագ		
			2025	Ջեռուցման ծավալներ — «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ

-1 հարկի հատակագիծ Մ1 : 100



Համաձայնեցված է՝
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ինժեներատեխնիկական կենտրոն»
մասնաճյուղ

ԷՋՄ ծառայության պետի ՊԿ Ժ. Պողոսյան

Համաձայնեցված է՝
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Գլխավոր էներգետիկի
բաժնի գլխավոր մասնագետ Ա. Կարապետյան

Գծեց	Ա. Հարությունով			1-013-25 ՋՕ		
				«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Թբիլիսյան խճուղի 43/2 հասցեում գտնվող շենքի հիմնանորոգում		
				Ջեռուցում	Փուլ	Թերթ	Թերթեր
					ԱՆ	3	7
Պաշտոն	ԱԱՀ	Ստորագ					
			2025	-1 հարկի հատակագիծ ջեռուցման համակարգով Մ 1:100	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ		

I հարկի հատակագիծ Մ1 : 100



Համաձայնեցված է՝
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ինժեներատեխնիկական կենտրոն»
մասնաճյուղ

ԷՋՄ ծառայության պետի ՊԿ Ժ. Պողոսյան

Համաձայնեցված է՝
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Գլխավոր էներգետիկի
բաժնի գլխավոր մասնագետ Ա. Կարապետյան

Պայմանական նշաններ

- Ջեռուցման մատակարարման խողովակ
- Ջեռուցման հետադարձ խողովակ
- Ֆ1 ֆանկոյլ բաց մոնտաժումով
- Ջեռքի կարգավորման փական

Գծեց	Ա. Հարությունով			1-013-25 ՋՕ
				«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Թբիլիսյան խճուղի 43/2 հասցեում գտնվող շենքի հիմնանորոգում
				Ջեռուցում — Փուլ: ԱՆ; Թերթ: 4; Թերթեր: 7
Պաշտոն	Անձ.	Ստորագ.		
			2025	1-ին հարկի հատակագիծ ջեռուցման համակարգով Մ 1:100
				«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ

II հարկի հատակագիծ Մ1 : 100



Համաձայնեցված է՝
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ինժեներատեխնիկական կենտրոն»
մասնաճյուղ

ԷՋՄ ծառայության պետի ՊԿ Ժ. Պողոսյան

Համաձայնեցված է՝
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

Գլխավոր էներգետիկի
բաժնի գլխավոր մասնագետ Ա. Կարապետյան

Պայմանական նշաններ

- Ջեռուցման մատակարարման խողովակ
- Ջեռուցման հետադարձ խողովակ
- Ֆ1 — ֆանկոյլ բաց մոնտաժումով
- Ջեռքի կարգավորման փական

Գծեց	Ա. Հարությունով			1-013-25 ՋՕ	
				«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Թբիլիսյան խճուղի 43/2 հասցեում գտնվող շենքի հիմնանորոգում		
Պաշտոն	ԱԱՀ	Ստորագ		Ջեռուցում	Փուլ: ԱՆ; Թերթ: 5; Թերթեր: 7
			2025	2-րդ հարկի հատակագիծ ջեռուցման համակարգով Մ 1:100	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ



Պայմանական նշաններ

Ջեռուցման ուղտուղարկման խողովակ

Ջեռուցման հետադարձ խողովակ

Ֆանկոյլ բաց տեսադարսող

Ջերմացման հետադարձ փականք







				1-013-25 ՋՕ		
Գծեց	Ա. Հարությունով			«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Թբիլիսյան խճուղի 43/2 հասցեում գտնվող շենքի հիմնանորոգում		
				Ջեռուցում	Փուլ	Թերթ	Թերթեր
					ԱՆ	7	7
Պաշտոն	ԱԱՀ	Ստորագ		Գազի կաթսաների միացման սխեմաներ, Շրջանառող պոմպ սխեմա	«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ	
			2025			

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

«ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Լիցենզիա № ՔՊԼ-001233 առ 23.09.2024թ.

Պատվիրատու – «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ 43/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1-013-25 ՀԱ

Հատոր 4

Տնօրենի տեղակալ- գլխավոր ճարտարագետ՝		Հ. Իսպիրյան
ՆՀԲ պետ		Գ. Ալավերդյան
Նախագծի գլխավոր ճարտարագետ՝		Ա. Վարդանյան

2025

Գրքի, հատորի համար	Նշանակումը	Անվանումը	Ծանոթություն
Օբյեկտ՝ **«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Թբիլիսյան խճուղի 43/2 հասցեում գտնվող շենքի հիմնանորոգում**			
Աշխատանքային նախագիծ			
1	ԸԲ	Ընդհանուր բացատրագիր	
2	**ՃՇ**	**Ճարտարապետաշինարարական մաս**	
2.1	Ճ	Ճարտարապետական լուծումներ	
2.2	ԵԿ	Կոնստրուկտիվ լուծումներ	
3	**ԻՑՍ**	**Ինժեներական ցանցեր և սարքավորումներ**	
3.1	ԷՄ	Էլեկտրամատակարարման համակարգ	
3.2	ՀԱ Կ ՊԱ	Հրդեհային ազդանշանում Հեռահաղորդակցման համակարգեր Պահպանության տեսահսկման և ազդանշանային համակարգ	
3.3	Գ	Գազամատակարարում	
3.4	ՋԿ	Ջրամատակարարման և կոյուղու համակարգեր	
3.5	ՋՕ	Ջեռուցում և օդափոխություն	
4	ՀԱ	Հրդեհային անվտանգության միջոցառումներ	
5	ԱՊ	Աշխատանքի պայմաններ և կազմակերպում	
6	ՔՊ և ԱԻ	Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ	
7	ՏԱՊ	Տեռորիստական ակտերի դեմ պայքարի միջոցառումներ	
8	Ն	Շինարարական աշխատանքների նախահաշիվ	

Согласовано

Взам. инв. №

Подп. и дата

Инв. № подл.

Փոփ	Մասն	Թերթ	№աստ	Ստորգ.	Ամ.ա	1-013-25 ՆԿ		
ՆԳՃ		Վարդանյան			05.2025	Նախագծի կազմը	Փուլ	Թերթ	Թերթեր
							ԱՆ	1	1
							Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ		

Բովանդակություն

1 Ելակետային փաստաթղթեր.....7

ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 8

2 Օբյեկտի նկարագիրը 10

2.1. Ընդհանուր տեղեկություններ 10

2.2. Վերակառուցվող օբյեկտի տեխնիկական սարքերի, սարքավորումների, շենքերի ԵՎ շինությունների անվտանգության ապահովման պահանջների ապահովման միջոցառումները.....14

2.2.1. Տեխնիկական սարքերին ներկայացվող պահանջներ.....14

2.2.2. Տեխնիկական սարքերի ԵՎ սարքավորումների անվտանգության պահանջների ապահովում 15

2.2.3. Շենքերի, շինությունների ԵՎ շինությունների անվտանգության ապահովում պահանջներ 15

2.2.4. Տեղեկատվություն աշխատողների հաշվարկային թվաքանակի, աշխատատեղերի ԵՎ դրանց հագեցվածության մասին 16

3. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ հրդեհային անվտանգության ապահովման հիմնական միջոցառումները.....18

3.1. Ընդհանուր դրույթներ.....18

3.2. Հրդեհային անվտանգության ապահովման ընդհանուր պահանջները.....18

3.3. Հրդեհային անվտանգության ապահովման վերաբերյալ կազմակերպչական միջոցառումներ 20

4.4. Շենքերին, շինություններին, տարածքներին ԵՎ շինարարական հրապարակներին ներկայացվող հրդեհային անվտանգության պահանջներ.....21

5. Կապիտալ շինարարության օբյեկտի շենքերի ԵՎ շինությունների միջԵՎ հակահրդեհային միջտարածությունները 27

6. Հակահրդեհային արտաքին ջրամատակարման 30

6.1. Սառը ջրի մատակարարման համակարգերը.....30

Согласовано

Взам. инв. №

Подп. и дата

Инв. № подл.

						1-013-25 ՀԱ	
				Ստոր.	Ամս.		
ՆԳՃ		Վարդանյան				Հրդեհային անվտանգության միջոցառումներ	Փուլ: Р; Թերթ: 1; Թերթեր: 77
Նախագծող		Սարգսյան					«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ

6.2. Հակահրդեհային արտաքին ջրամատակարման 31

7. Ընդունված նախագծային ԵՎ ծավալա-տարածական պլանավորման որոշումների նկարագրությունը ԵՎ հիմնավորումը, շինարարական կոնստրուկցիաների հրակայունության աստիճանը ԵՎ հրդեհային վտանգի դասը 32

8. Հրդեհի դեպքում մարդկանց անվտանգությունն ապահովելու նախագծային լուծումների նկարագրությունը ԵՎ հիմնավորումը 34

8.1. Հրդեհի տարածման կանխարգելում 34

8.2. Հրդեհի մարում ԵՎ փրկարարական աշխատանքներ 36

8.2.1. Հրդեհաշիջման ժամանակ հրշեջ ստորաբաժանումների անվտանգությունն ապահովելու միջոցառումները 44

8.3. Տարահանման կազմակերպումը ԵՎ կառավարումը 46

8.3.1. Հրդեհի դեպքում լուսային ազդարարումը 53

8.3.2. Հրդեհի ազդանշանման եվ հրդեհաշիջման, հակածխային պաշտպանության համակարգերի կայանքների պահպանում և տարահանման կազմակերպում 55

8.4. Հրդեհի դեպքում գործելու կարգ 56

9. Պայթյունի ԵՎ հրդեհի վտանգի հիման վրա շենքերի, շինությունների, տարածքների, սարքավորումների և արտաքին կայանքների կատեգորիայի մասին տեղեկատվություն 58

10.3. Հրդեհային ազդանշանային համակարգ, Ազդարարման և տարհանման կառավարման համակարգ 59

10.3.1. Նախագծում ընդունված հիմնական որոշումները 59

10.3.2. Հրդեհի դեպքում ազդարարման ԵՎ մարդկանց տարհանման կառավարման համակարգ 64

11. Վերակառուցվող շինության հրդեհային անվտանգության ապահովման կազմակերպչական ԵՎ տեխնիկական միջոցառումների նկարագրությունը 66

11.1 Ընդհանուր դրույթներ 67

11.2 Հրդեհային պաշտպանության անվտանգության կազմակերպում 70

12. Մարդու կյանքին եվ առողջությանը սպառնացող ու գույքի ոչնչացման հրդեհային ռիսկերի հաշվարկ 72

Օգտագործված գրականությունը 73

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....75

Լիցենզիա.....76

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ 24.06.2024 Թ. № Ն/29/26655-2024 ԳՐՈՒԹՅՈՒՆ.....77

1 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

– «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 21.08.2024թ. №Ն/29/36146-2024 գրություն

– Մասնաշենքի տեխնիկական վիճակի գնահատման եզրակացություն՝ տրված «Սեյսմաէքսպերտ» ՍՊԸ կողմից:

ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1) **հրդեհային անվտանգություն**՝ հրդեհներից անձի, գույքի, հասարակության և պետության պաշտպանվածություն.
2) **հրդեհ**՝ չվերահսկվող այրում, որը բարոյական, ֆիզիկական, գույքային վնաս է հասցնում անձին, հասարակության և պետության շահերին, վտանգում է մարդու առողջությունը և կյանքը.
3) **հրդեհային անվտանգության պահանջներ**՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված՝ հրդեհային անվտանգության ապահովման ուղղությամբ սոցիալական և տեխնիկական բնույթի հատուկ պայմաններ.
4) **հրդեհաշիջման (հրդեհի մարման) հետ կապված վթարային-փրկարարական աշխատանքներ**՝ հրդեհի ժամանակ մարդկանց, գույքը փրկելու, տուժողներին առաջին բժշկական օգնություն ցույց տալու ուղղությամբ հրդեհային պահպանության մարտական գործողություններ.
5) **հրդեհային անվտանգության միջոցներ**՝ հրդեհային անվտանգության ապահովմանը, այդ թվում՝ հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարմանն ուղղված գործողություններ.
6) **հրդեհային անվտանգության ապահովման համակարգ**՝ հրդեհների դեմ պայքարի համար նախատեսված ուժերի և միջոցների, ինչպես նաև իրավական, կազմակերպական, տնտեսական, սոցիալական և գիտատեխնիկական միջոցառումների ամբողջություն:
7) **«Ա», «Բ», «Վ», «Գ», «Դ» կատեգորիաների շինություններ**՝ ըստ դասակարգման շինություններ, որտեղ շրջանառության մեջ են գտնվում որոշակի քանակով և որոշակի պայթյունահրդեհավտանգավորություն ունեցող նյութեր,
8) **հակահրդեհային միջտարածություն**՝ շինությունից դեպի հարևան շինություններ կրակի տարածումը կանխարգելու նպատակով նախատեսված տարածություն,
9) **հակահրդեհային պաշտպանության համակարգ**՝ կազմակերպչական միջոցառումների և այնպիսի տեխնիկական միջոցների համախումբ, որոնք ուղղված են մարդկանց վրա հրդեհի վտանգավոր գործոնների ներգործության կանխմանը և հրդեհից նյութական վնասների առաջացման սահմանափակմանը,
10) **հակաճխային պաշտպանություն**՝ կազմակերպչական միջոցառումների և այն տեխնիկական միջոցների համալիրը, որոնք ուղղված են մարդկանց վրա ծխի, բարձր ջերմաստիճանի և այրման թունավոր արգասիքների ներգործության կանխմանը,
11) **հրդեհի կանխման համակարգ**՝ կազմակերպչական միջոցառումների և տեխնիկական միջոցների համալիր, որոնք ուղղված են հրդեհի առաջացման պայմանների բացառմանը,
12) **մարդկանց տարահանումը հրդեհի ժամանակ**՝ մարդկանց տեղաշարժի հարկադրական գործընթացը այն գոտուց, որտեղ կա նրանց վրա հրդեհի վտանգավոր

գործոնների ազդեցության հնարավորություն,

13) **շենքի հրակայունության աստիճան՝** կոնստրուկտիվ տարրերի կրողունակությունների, ամբողջականության և ջերմամեկուսացման պահպանման չափանիշ:

14) **ազդանշաններ իրավիճակի մասին՝** տեղային հրդեհի ազդանշանման համակարգից երեք ազդանշաններ՝ «ՆՈՐՄԱ», «ԱՆՍԱՐՔՈՒԹՅՈՒՆ» և «ՀՐԴԵՀ», որոնք պետք է փոխանցվեն վերին մակարդակի համակարգին,

15) **ազդասարք հրդեհի, ինքնաշխատ՝** պաշտպանվող միջավայրում հրդեհի արգասիքների (ջերմություն, ծուխ, ճառագայթում, գազեր և այլն) տարբեր մեթոդներով հայտնաբերմամբ հրդեհի առկայության մասին ազդանշան կազմավորող սարքվածք,

16) **հրդեհի տեղեկացման և տարհանման կառավարման համակարգ՝** հրդեհի բռնկման, տարհանման անհրաժեշտության և ուղղությունների, ինչպես նաև հաջորդականության մասին մարդկանց ժամանակին տեղեկացնելու համար նախատեսված տեխնիկական միջոցների համալիր,

Համառոտագրություններ և նշագրումներ

ՊԳ	–	Пожарный гидрант՝
ՀԱՀ	–	հրդեհի ազդանշանման համակարգ,
ՀԱՎՀ	–	հակահրդեհային ավտոմատիկայի համակարգ,
ՀՏՏԿՀ	–	հրդեհի տեղեկացման և տարհանման կառավարման համակարգ,
ՆՓ	–	նորմատիվային փաստաթղթեր,
ՏՓ	–	տեխնիկական փաստաթղթեր:
ՓԾ	–	Փրկարար ծառայություն
ՆԳՆ	–	Ներքին գործերի նախարարարաություն
ԸՎՀՍ	–	Ընդունիչ-վերահսկիչ հրդեհային սարք
ՀԱՎԳ	–	Հրդեհային ազդանշանի վերահսկման գոտի
ՀԿՄ	–	Հրակայուն մալուխային գիծ
ԻԷԱ	–	Էներգիայի ինքնավար աղբյուր
ՀՊՀ	–	Հակահրդեհային պաշտպանության համակարգ
ՀԱ	–	Հրդեհի ազդասարք

2 ՕԲՅԵԿՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերակառուցվող շինությունը գտնվում է ՀՀ Քաղաք Երևան, Արաբկիր վարչական շրջան, Թբիլիսյան խճուղի 43/2 հասցեյում: Կադաստրային ծածկագիրը (01-003-0402-0294):

Հողամասում գոյություն ունի արտադրամաս, բաղկացած մեկ կիսանկուղային հարկից և երկու վերնահարկից: Արտադրամասի արտաքին չափերն են 13.00 մ x 30.00 մ: Բարձրությունը 12.00 մ: Տանիքը միալանջ է, թիթեղյա, կազմակերպված ջրահեռացմամբ:

Նկար 3.1. Վերակառուցվող օբյեկտի իրավիճակային պլանը

Արտադրամասին կից առկա է 84.00 քմ մակերեսով միահարկ կցակառույց, որը նախատեսվում է քանդել:

Արտադրամասը տեղակապված է հողամասի անմիջապես սահմանով: Շենքը կազմված է ե/բ կմախքից, պատի պանելներից և ծածկի պանելներից: Շենքի կիսանկուղային հարկից առկա է ելք դեպի կողքի հողամաս, որը նույնպես հանդիսանում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ - ի սեփականություն: Ներկայումս շենքն ունի թվով 2 մուտքեր, որոնք գտնվում են հողամասի սահմանից դուրս:



Նկար 2.2. Վերանորոգվող օբյեկտի հատակագիծը

Նախագծով նախատեսվում է.

1. Ապամոնտաժել շենքին կից միահարկ կցակառույցը,
2. Ապամոնտաժել շենքի տանիքը,
3. Ապամոնտաժել շենքի պատի պանելները և գոյություն ունեցող պատուհանները,
4. Ապամոնտաժել գոյություն ունեցող հողամասի սահմանից դուրս գտնվող թվով 2 մուտքերը,
5. Ապամոնտաժել շենքի ներքին բոլոր պատերը, թողնել միայն ե/բ կմախքը,
6. Կառուցել կցակառույց վերակառուցվող շենքին կից,
7. Արտաքին պատերը շարել ե/բ ծածկի վրա, պատի պանելների փոխարեն, ինչի արդյունքում շենքի արտաքին մակերեսը կփոքրանա և շինության արտաքին պատերը հողամասի սահմանից կհեռանան ամենաքիչը 100 մմ -ով,
8. Պատերը նախատեսվում է շարել 200 մմ հաստությամբ, տուֆով կամ բետոնե բլոկերով, արտաքինից ջերմամեկուսացնել և երեսապատել բնական քարով

կամ սվաղ-ներկով,

9. Շենքի կցակառույցից նախատեսել գլխավոր մուտքը, 600մմ բարձր ասֆալտի նիշից, աստիճաններով և ԲՄԽ - ների համար աստիճան բարձրացնող էլեկտրական սարքով,
10. Մյուս մուտքը նախատեսել կիսանկուղային հարկից, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի սեփականություն հանդիսացող կից հողամասի տարածքից, կառուցելով 1500 մմ լայնությամբ դեպի 0.00 նիշ իջնող աստիճան,
11. Շարել ներքին պատերը նախագծով նշված հատվածներում,
12. Պահպանել գոյություն ունեցող աստիճանները,
13. Շենքի տանիքը նախատեսել հարթ, կազմակերպված ջրահեռացմամբ, կցակառույցից նախատեսել ելք դեպի հարթ տանիք սպասարկման համար,
14. Շենքը երեսապատել տրավերտինով, բազալտով, տուֆով,սվաղով և ներկով (նախագծով նշված հատվածներում),

Շենքը ծառայելու է որպես արտադրական և գրասենյակային նշանակության շինություն: Ներսում նախատեսվում է տարածքը բաժանել.

-1 հարկ.

1. Նախատեսվում է -1 հարկը բաժանել արտադրականն սենքերի, պահեստասենյակների, որտեղ պահվելու են մետաղական խողովակներ, դետալներ և գործիքներ,
2. Նախատեսվում է ունենալ 2 սանհանգույց, լոգարաններով:
3. Արտադրական սենք 1 ում և 2 ում նախատեսվում է ունենալ պատուհաններ, վերևում տեղադրված:

1-ին հարկ.

1. Կցակառույցում անմիջապես մուտքի դիմաց նախատեսել պահակակետ,
2. Տվյալ հարկի մնացած հատվածը բաժանել աշխատասենյակների,
3. Իրականացնել տղամարդկանց սանհանգույց, թվով 2-ը, իսկ որպես կանացի սանհանգույց կարող է ծառայել ԲՄԽ-ների համար նախատեսված սանհանգույցը , որն ունի 1.65x1.8մ ներքին չափեր,
4. Միջանցքները նախատեսվում է անջատել աստիճաններից համապատասխան առանձին միջանցքներով:

2-րդ հարկ

1. 2-րդ հարկում նույնպես նախատեսվում է տարածքը բաժանել աշխատասենյակների, նշված հատվածներում ապակեպատումներով առանձնացված,

2. Սանհանգույցների հատվածում կրկնել 1-ին հարկի դասավորվածությունը։

3-րդ հարկ

1. Նախատեսվում է 3-րդ հարկում ունենալ թվով 2 տեխնիկական սենյակ,
2. Միջանցքից նախատեսել ելք դեպի հարթ տանիք, սպասարկումը ապահովվելու համար,
3. Տանիքի պարապետերը նախատեսել 1200 մմ բարձրությամբ։
4. Կցակառույցի տանիքը նույնպես նախատեսել հարթ, դեպի վերակառուցված շենքի տանիք ջրահեռացմամբ։

Վերակառուցման արդյունքում նախատեսվում է առաստաղների մաքուր բարձրությունը ունենալ 2800մմ, իսկ բոլոր միջանցքների և անցուղիների լայնությունները ամենաքիչը 1800մմ։ Շենքում նախատեսվող աշխատողների քանակը - 1 հարկում 6 հոգի է, 1-ին հարկում աշխատելու են ընդհանուր թվով 15 հոգի, իսկ 2-րդ հարկում նախատեսվող աշխատողների քանակը նույնպես 15 հոգի։

2.2. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՕԲՅԵԿՏԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2.2.1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Վերակառուցվող օբյեկտում օգտագործվող (շահագործվող) տեխնիկական սարքերը արտադրվում են այն կազմակերպությունների կողմից, որոնք ունեն անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և որակյալ մասնագետներ՝ նախագծային փաստաթղթերին համապատասխան՝ հաշվի առնելով գիտության և տեխնիկայի ձեռքբերումները և արդյունաբերական անվտանգության պահանջները: Տեխնիկական սարքերի արտադրության մեջ իրականացվում է արտադրված արտադրանքի որակի հսկողություն և դրանց համապատասխանությունը տեխնիկական փաստաթղթերին, բաղադրիչների և նյութերի մուտքային որակի հսկողություն, ինչպես նաև արտադրված արտադրանքի վերաբերյալ բողոքների գրանցման և վերացման սահմանված ընթացակարգերի պահպանում: Տեխնիկական սարքի տեխնիկական փաստաթղթերում, ներառյալ օտարերկրյա, արտադրողը (մատակարարը) կազմակերպությունը նշում է անվտանգ շահագործման պայմաններն ու պահանջները, այս սարքի և դրա հիմնական բաղադրիչների հսկողության փորձարկումների (ստուգումների) անցկացման մեթոդաբանությունը, ծառայության ժամկետը և սպասարկումը, կենսունակությունը, պահպանման և վերանորոգման և ախտորոշման կարգը:

Տեխնիկական սարքերը ենթակա են պահպանման՝ դրանց օգտագործման ողջ ժամանակահատվածում: Տեխնիկական սարքը լավ վիճակում պահելու համար կանխարգելիչ սպասարկման շրջանակը և ժամկետները որոշվում են այս սարքի տեխնիկական փաստաթղթերում: Վերակառուցվող օբյեկտը շահագործող կազմակերպությունը կազմակերպում է նշված սարքերի տեխնիկական սպասարկման աշխատանքները և վերահսկում դրանց իրականացումը: Վերակառուցվող օբյեկտներում տեխնիկական սարքերը վերանորոգելիս և կարգավորելիս երաշխավորվում է, որ այդ աշխատանքը կատարվում է համապատասխան կանոնակարգերի պահանջների հիման վրա, ինչպես նաև վերանորոգման և ճշգրտման աշխատանքների պլանավորման, որակի վերահսկման և գրանցման սահմանված ընթացակարգերի պահպանմամբ:

2.2.2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Մեքենայի կամ սարքավորման արտադրության ընթացքում ապահովվում են տեխնիկական կանոնակարգերին համապատասխան նախագծային փաստաթղթերով սահմանված անվտանգության պահանջները՝ հաշվի առնելով կիրառվող տեխնոլոգիական գործընթացները և կառավարման համակարգերը:

Արտադրողն իրականացնում է մեքենաների և սարքավորումների ռիսկերի գնահատում մինչև դրանք Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ դնելը:

Մեքենայի կամ սարքավորման արտադրողը մեքենային և սարքավորումներին տրամադրում է շահագործման հրահանգներ:

Գործողությունների ցանկն ուղղված է պահանջներին բավարարելուն.

- արդյունաբերական անվտանգություն;
- ջերմային անվտանգություն;
- էլեկտրական անվտանգություն;
- պայթյունի անվտանգություն;
- հրդեհային անվտանգություն;
- մեխանիկական անվտանգություն;
- ճառագայթային անվտանգություն;
- կառավարման համակարգի անվտանգություն;
- Վերակառուցվող տարածքներ;
- Վերակառուցվող տեղամասերին և Վերակառուցվող ձեռնարկության տարածքին.

2.2.3. ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՀՀ ՇՆ I-3.01.01-2008 սահմանում է շենքերի և շինությունների, ցանցերի և ինժեներական աջակցության համակարգերի, ինչպես նաև նախագծային գործընթացների համար անհրաժեշտ նվազագույն պահանջները.

- մեխանիկական անվտանգություն;
- հրդեհային անվտանգություն;

- անվտանգություն բնական վտանգավոր գործընթացների և երևույթների և (կամ) տեխնածին ազդեցությունների ժամանակ.
- անվտանգ կենսապայմաններ մարդու առողջության և շենքերում և շինություններում մնալու համար.
- անվտանգություն շենքերի և շինությունների օգտագործողների համար.
- շենքերի և շինությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց և սահմանափակ շարժունակությամբ բնակչության այլ խմբերի համար.
- շենքերի և շինությունների էներգաարդյունավետություն.
- Շենքերի և շինությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության անվտանգ մակարդակը:

Նախագծային փաստաթղթերը պետք է օգտագործվեն որպես հիմնական փաստաթուղթ շենքի կամ կառույցի շահագործման ցիկլի բոլոր հետագա փուլերում շենքի կամ շինության անվտանգության ապահովման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

2.2.4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աշխատակիցների քանակը որոշվում է սպասարկող անձնակազմի համալրման ժամանակացույցին համապատասխան՝ ըստ աշխատատեղերի և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության գործող նորմերը, կանոնները և աշխատանքային օրենսդրությունը:

Աշխատողների մասնագիտական և որակավորման կազմը որոշվում է «Մի շարք դասակարգիչներ հաստատելու մասին» ՀՀ կառավարության 07.02.2013թ-ի N 141-Ն որոշմանը, աշխատաիցների որակավորման և անվտանգության կանոնակարգերի պահանջների համաձայն:

Ըստ հարկերի անձնակազմի բաշխումը

Հարկը	Աշխատակիցների քանակը	Նշումներ
-1		
1	2	

2	15	
3	15	

3. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

3.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Համաձայն «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի՝ ընդունված 2001թ-ի ապրիլի 18-ին, բնակչության, բնակավայրերի և օբյեկտների հրդեհային անվտանգությունն ապահովվում է՝

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված, ինչպես նաև նորմատիվ փաստաթղթերով նախատեսված հրդեհային անվտանգության պահանջների պարտադիր կատարմամբ.
- հրդեհների առաջացումը կանխարգելող և դրանց մարմանը նպաստող համապետական և տեղական նպատակային ծրագրերի մշակմամբ ու իրագործմամբ:

Հրդեհային անվտանգության մասին ՀՀ օրենսդրությունը բաղկացած է ՀՀ Սահմանադրությունից, ՀՀ միջազգային պայմանագրերից, սույն օրենքից, այլ օրենքներից և իրավական ակտերից:

Հրդեհների առաջացումը կանխարգելող և դրանց մարմանը նպաստող հանրապետական և տեղական նպատակային ծրագրերը մշակում ու իրականացնում են պետական կառավարման մարմինները՝ ՀՀ կառավարության լիազորած մարմնի (այսուհետ՝ լիազորված մարմին) ներկայացրած հակահրդեհային իրավիճակի վերլուծության արդյունքների և համապատասխան առաջարկությունների հիման վրա: Տեղական նպատակային ծրագրերը համաձայնեցվում են տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Կազմակերպությունները պահպանող գերատեսչական հրդեհային պահպանության ստորաբաժանումները պահպանելու, դրանք բնակելի տարածքներով ապահովելու և մյուս ծախսերն իրականացնում են համապատասխան կազմակերպությունները:

3.2. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Օբյեկտները պետք է ապահովված լինեն հրդեհային պահպանությամբ, ինչպես նաև հակահրդեհային ջրամատակարարմամբ, շենքերին և շինություններին հարող մշտական գործող ճանապարհներով, կապի միջոցներով՝ համաձայն հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի:

Շենքերի, շինությունների, կազմակերպությունների ծավալահատակագծային ու կառուցվածքային լուծումները, ինչպես նաև դրանց միջև անջրպետները պետք է ապահովեն մարդկանց անվտանգությունը և հրդեհների մարումը:

Բնակավայրերի բնակելի տարածքի սահմաններում պոտենցիալ վտանգավոր (հրդեհների աղետային զարգացման առումով) պահեստների և շինությունների, ինչպես նաև այրվող գազերով և հեղուկներով տարանցիկ խողովակաշարերի տեղաբաշխումն իրականացվում է նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Նշված օբյեկտների համար շինարարական հրապարակներն ընտրում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները՝ ելնելով հրդեհապայթունավտանգավորության փորձաքննության արդյունքներից:

Օբյեկտների, այդ թվում՝ շենքերի և շինությունների նախագծման և շինարարության ընթացքում պետք է կատարվեն նորմատիվ փաստաթղթերով նախատեսված հրդեհային անվտանգության պահանջները: Շինարարությամբ, վերակառուցմամբ և տեխնիկական վերազինմամբ ավարտված օբյեկտները, այդ թվում՝ շենքերը և շինությունները, չեն կարող շահագործման հանձնվել, եթե այնտեղ չեն կատարվել նախագծով նախատեսված հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի պահանջները:

Վերակառուցվող շենքերի ու շինությունների, դրանց մասերի կամ համալիրների կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման (ներառյալ՝ քանդման), արդիականացման նախագծերը համաձայնեցվում են պետական հրդեհային հսկողության մարմինների հետ:

Հրդեհային անվտանգության բնագավառում տեղեկատվության ապահովումն իրականացվում է հրդեհային անվտանգության ապահովման համակարգում այնպիսի հատուկ տեղեկատվության համակարգեր և տվյալների բանկեր (այսուհետ՝ տեղեկատվության համակարգ) ստեղծելու և օգտագործելու միջոցով, որոնք անհրաժեշտ են առաջադրված խնդիրների կատարման համար:

Հրդեհային անվտանգության մասին տեղեկությունները տեղեկատվության համակարգերում մտցնելու հիմքը և կարգը, ինչպես նաև դրանց հետ պաշտոնատար անձանց և քաղաքացիների ծանոթացման պայմաններն ու կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

ՀՀ հիդրոօդերևութաբանության լիազորված մարմինները և մյուս պետական մարմինները պարտավոր են անմիջապես և անհատույց կարգով տեղեկացնել պետական հակահրդեհային ծառայությանը հրդեհային անվտանգության համար անբարենպաստ դեպքերի և կանխագուշակումների մասին:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է տեղեկացնեն բնակչությանը հրդեհային անվտանգության ապահովման ուղղությամբ իրենց ընդունած որոշումների մասին և աջակցեն հրդեհատեխնիկական գիտելիքների տարածմանը:

3.3. ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Օբյեկտների ղեկավարները կամ նրանց լիազորած անձինք պարտավոր են աշխատակիցներին ծանոթացնել սույն կանոններին:

Օբյեկտների ղեկավարները կամ նրանց լիազորած անձինք պարտավոր են՝

- անցկացնել աշխատակիցների հրդեհային անվտանգության հրահանգավորում.
- կազմակերպել հրդեհի դեպքում մարդկանց տարահանման ուղիների պլանների մշակումը և համապատասխան վայրերում այդ պլանների տեղադրման աշխատանքները.
- հրդեհային անվտանգության նորմատիվ փաստաթղթերի պահանջների կատարման նպատակով մշակել և իրագործել միջոցառումներ (կազմել միջոցառումների պլան):

Օբյեկտների, ինչպես նաև դրանց կառուցվածքային ստորաբաժանումների հրդեհային անվտանգության համար պատասխանատու հանդիսանում է օբյեկտի ղեկավարը կամ իր կողմից նշանակված անձը: Առանձին տարածքների, շենքերի, շինությունների, արտադրամասերի, տեղամասերի, տեխնոլոգիական սարքավորումների և պրոցեսների, ինժեներական սարքավորումների հրդեհային անվտանգության համար պատասխանատվությունը օբյեկտի ղեկավարի կողմից ընդունված համապատասխան իրավական ակտով կարող է դրվել այլ պաշտոնատար անձանց վրա:

Հրդեհների կանխարգելման, ինչպես նաև դրանց մարման աշխատանքներին օբյեկտների աշխատակիցների ներգրավման նպատակով կարող են ստեղծվել հրդեհային պահպանության հասարակական կազմավորումներ:

Օբյեկտների հրդեհային անվտանգությունն ապահովող մարմինների կողմից Վերակառուցվող, վարչական, պահեստային և օժանդակ շինությունների, ինչպես նաև կառուցվող օբյեկտների շինարարական հրապարակների տեսանելի վայրերում փակցվում են ցուցատախտակներ՝ հրդեհային պահպանության կանչի հեռախոսահամարով:

Հրդեհավտանգ օբյեկտի ղեկավարի կողմից ընդունված համապատասխան իրավական ակտով պետք է սահմանվի հրդեհային վտանգին համապատասխան հակահրդեհային կանոնակարգ, որն իր մեջ ներառում է՝

- ծխելու վայրը և կահավորումը.
- շենքում (արտադրամասում) գտնվող միանվագ թույլատրելի դյուրավառ հումքի, կիսաֆաբրիկատների, պատրաստի արտադրանքի քանակները և պահման վայրերը.
- դյուրավառ թափոնների, հրդեհավտանգ փոշու հավաքման և հագուստների պահման կարգը.
- աշխատանքային օրվա վերջում էլեկտրասարքավորումների հոսանքազրկման, ժամանակավոր կրակային և այլ հրդեհավտանգ աշխատանքներ կատարելու կարգը.

- աշխատողների գործողությունները հրդեհ հայտնաբերելու դեպքում, ինչպես նաև հակահրդեհային հրահանգավորման անցկացման կարգը, ժամկետները և պատասխանատուները.
- կառուցվող օբյեկտի շինարարական հրապարակում ժամանակավոր շինությունների և արտադրամասերի, շինանյութի և սղոցանյութի պահեստների, հրդեհաշիջման ջրաղբյուրների, հրշեջ վահանակների և դրանց մոտեցման հրշեջ ավտոմեքենաների ճանապարհների տեղանշմամբ շինարարության ղեկավարի կողմից հաստատված և պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության հետ համաձայնեցված տարածքի հատակագիծը.
- հրդեհավտանգ օբյեկտի տարածքում բաց կրակի օգտագործման կարգը.
- հրդեհավտանգ օբյեկտի տարածքում բաց կրակի օգտագործման ժամանակ ծխելու կարգը.
- ժամանակավոր հրդեհավտանգ աշխատանքների կատարման կարգը:

Այն օբյեկտներում, որտեղ շինության մեկ հարկում միաժամանակ գտնվում են 10 և ավելի մարդ, տեսանելի վայրերում փակցվում են հրդեհների ժամանակ դեպի ելք ցույց տվող նշագծեր, սլաքներ, նախատեսվում են կայանքներ՝ հրդեհի դեպքում մարդկանց տեղեկացման համար:

Պայթյունավտանգ, ուժեղ ներգործող թունավոր նյութեր օգտագործող, վերամշակող և պահող օբյեկտների ղեկավարները հրդեհ առաջանալու դեպքում հրդեհաշիջման ղեկավարին տրամադրում են այդ նյութերի վերաբերյալ տվյալներ՝ անձնակազմի անվտանգությունն ապահովելու նպատակով:

4.4. ՇԵՆՔԵՐԻՆ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՏԱՐԱԾՔՆԵՐԻՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Կազմակերպությունների, շենքերի, շինությունների, շինարարական հրապարակների, բաց պահեստների, ինչպես նաև շենքերին կից հակահրդեհային միջտարածությունները պետք է ժամանակին մաքրվեն հրդեհավտանգ թափոններից: Հրդեհավտանգ թափոնները, աղբը պետք է հավաքվեն հատուկ հատկացված տարածքներում, կոնտեյներների կամ արկղերի մեջ և տեղափոխվեն:

Շենքերի, շինությունների, շինարարական հրապարակների, հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման, շենքերի և շինությունների կառուցման համար:

Շենքերի, շինությունների, բաց պահեստների հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների, անշարժ հրդեհային սանդուղքների, հրդեհային գույքի մոտեցման ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն:

Վերակառուցման պատճառով ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով պետք է տեղադրվեն շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:

Հրշեջ հիդրանտների դիտահորերի կափարիչները և հրշեջ ջրավազաններին հարակից, հրշեջ ավտոմեքենաների կայանման համար նախատեսված հարթակները, պարբերաբար պետք է մաքրվեն սառույցից և ձյունից:

Ժամանակավոր շինությունները, կրպակները, տաղավարները պետք է տեղադրվեն շենքերից և շինություններից 8 մետրից ոչ պակաս հեռավորության վրա կամ հակահրդեհային պատնեշի մոտ (բացառությամբ, այլ իրավական ակտերով սահմանված պահանջվող ավելի մեծ հակահրդեհային միջտարածության): Առանձին բլոկ-կոնտեյներային շենքերը թույլատրվում է տեղադրել խմբերով, յուրաքանչյուր բլոկում 10-ից ոչ ավելի կոնտեյներ, որոնց գումարային մակերեսը չպետք է գերազանցի 800մ2: Այդ շենքերի խմբերից մինչև շինությունները, առևտրական տաղավարները և օբյեկտները ընկած հեռավորությունը չպետք է լինի 15 մ-ից պակաս:

Հակահրդեհային միջտարածություններում, բաց տարածքներում արգելվում է կրակի միջոցով թափոններ ոչնչացնելը, իսկ աղբաոչնչացման համար նախատեսված հատուկ տեղերում այրումը հսկողությունից դուրս թողնելը:

Հակահրդեհային ջրաղբյուրները, շենքերի և շինությունների մուտքերը արագ ի հայտ բերելու նպատակով, օբյեկտների այդ տարածքները պետք է ապահովված լինեն լուսավորությամբ:

Վերակառուցվող և պահեստային շինությունների համար պետք է որոշվի պայթյունահրդեհավտանգության կարգը և նշվի շինությունների դռների վրա:

Բարձր հրդեհավտանգություն ունեցող սարքավորումների մոտ փակցվում են անվտանգության նշաններ, ցուցանակներ:

Արտադրության պրոցեսում չի թույլատրվում օգտագործել պայթյունահրդեհավտանգության ցուցանիշները չուսումնասիրված նյութեր:

Շենքերի և շինությունների հակահրդեհային համակարգը և սարքավորումները (հակածխային պաշտպանության, հրդեհային ինքնաշխատ միջոցներ, հակահրդեհային ջրամատակարարման համակարգեր, հակահրդեհային դռներ, փականքներ, հակահրդեհային պատերի, ծածկերի միջի պաշտպանական սարքեր) պետք է մշտապես պահվեն սարքին, աշխատունակ վիճակում:

Դռների ինքնափակման համար օգտագործվող սարքերը պետք է գտնվեն աշխատունակ վիճակում: Չի թույլատրվում տեղադրել հակածխային, հակահրդեհային դռների նորմալ փակմանը խոչընդոտող հարմարանքներ:

Չի թույլատրվում աշխատանքներ կատարել ջերմային ճնշման ռեժիմների հսկողության համար նախատեսված վերահսկիչ-չափիչ սարքերի տեխնոլոգիական ինքնաշխատ համակարգերի անջատման դեպքում, ինչպես նաև անսարքություններով տեխնիկական սարքերի, սարքավորումների վրա, եթե դրանք կարող են հրդեհի պատճառ դառնալ:

Նորմավորված հրակայունության աստիճան պահանջող մետաղական կամ փայտյա կառուցատարրերի հրակայունության սահմանի բարձրացման կամ հրդեհային

վտանգավորության կարգերի նվազեցման համար, դրանք պետք է ներկվեն կամ մշակվեն (տոգորվեն) հրապաշտպան պատվածքով:

Շինարարական հիմնատարրերի այրվող ջերմամեկուսիչ նյութերի, մետաղական հենարանների և սարքավորումների հրապաշտպան պատվածքների վնասվածքները պետք է անմիջապես վերացնել:

Հակահրդեհային պատնեշների, ծածկերի պարսպող հիմնատարրերի և ինժեներական, տեխնոլոգիական հաղորդակցման ուղիների փոխհատման տեղերում առաջացած բացվածքները և ճեղքերը պետք է փակվեն անհրաժեշտ հրակայուն և ծխագազանթափանցելիություն ապահովող շինարարական շաղախով կամ չայրվող նյութերով:

Շենքերում, շինություններում և բաց տարածքներում չի թույլատրվում՝

- աղբահեռացման հորաններում և աղբակուտակման խցերում աղբի ոչնչացումը այրման միջոցով.
- հանել նախագծով նախատեսված նախասրահների, սրահների, միջանցքների, նախամուտքերի, սանդղավանդակների դռները.
- կուտակել կահույք, սարքավորումներ և այլ իրեր՝ պատշգամբների և խորշապատշգամբների մուտքերի, կից բաժանմունքների, արտաքին տարահանման սանդուղքների դռների մոտ.
- շենքերում տարածքների մաքրումը բենզինով, կերոսինով և այլ այրվող ու դյուրավառ հեղուկներով, ինչպես նաև սառած ջրմուղների տաքացումը զոդման լամպերով և բաց կրակի օգտագործման այլ մեթոդներով.
- տեղադրել ճաղավանդակներ լուսամուտների վրա (բացառությամբ պահեստներից, դրամարկղերից, հատուկ սենյակներից, բնակելի տներից, ավտոտնակներից).
- ապակեպատել հրդեհի դեպքում անվտանգության գոտիներին պատկանող խորշապատշգամբները և պատշգամբները.
- սանդղավանդակներում և միջանցքներում ստեղծել պահեստանոցներ (խորդանոցներ), պահել կահույք, այրվող և դյուրավառ նյութեր՝ սանդղաբազուկների տակ և դրանց հարթակների վրա (սանդղաբազուկների տակ առաջին և ցոկոլային հարկերում թույլատրվում է տեղադրել միայն կենտրոնական ջեռուցման, ջրաչափիչների, էլեկտրավահանակների կառավարման հանգույցներ, որոնք պետք է մեկուսացված լինեն չայրվող միջնորմներով).
- գործարկման ընթացքում վառարանային սարքերի, նավթավառների, կերոգազերի, պրիմուսների, լուսավորման լամպերի լցավորումը հեղուկ վառելանյութով.
- կրակի հետ անզգույշ վարմունքը՝ անզգուշություն ծխելիս, հրդեհավտանգ աշխատանքներ կատարելը, բաց կրակից օգտվելը, ինչպես նաև կրակը առանց հսկողության թողնելը.

- միմյանց հետ քիմիական փոխազդեցությամբ ինքնայրում առաջացնող նյութերի համատեղ պահումը, ինչպես նաև ջերմային կամ կենսաբանական ինքնայրման հակում ունեցող նյութերի պահումը.

Ճաշարաններում, ցուցահանդեսային, առևտրային, լսարաններում, ինչպես նաև այլ մարդաշատ վայրերում, այցելուների թիվը չպետք է գերազանցի նախագծման նորմերով սահմանված և տարահանման թողունակության հիման վրա կատարված հաշվարկային քանակից: Այն դեպքում, երբ նախագծման նորմերում բացակայում են հաշվարկման համար անհրաժեշտ տվյալներ, մեկ մարդու համար տարահանման ժամանակը պետք է ընդունվի 2 րոպե, իսկ հաշվարկային մակերեսը՝ 0.75 մ2:

Տարահանման ելքերի քանակը, չափերը, լուսավորության պայմանները, ճանապարհների երկարությունը և չծխապատման ապահովումը պետք է համապատասխանեն շինարարական նախագծման հակահրդեհային նորմերին:

Տարահանման ելքերի դռները պետք է ազատ բացվեն դեպի դուրս: Շենքում մարդկանց գտնվելու դեպքում, դռները կարող են փակվել ներսի կողմից հեշտ բացվող փականներով: Տարահանման ուղիներում տարահանման ելքերի դռները և այլ դռները (բացառությամբ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, միաբնակարան, այդ թվում՝ մեկուսացված, բնակելի տների, միաժամանակ 15 մարդուց ոչ ավելի ներկայությամբ սենքերի (բացի Ա և Բ կարգի սենքերի) առանց մշտական աշխատողների, 200 մ.քառ. ոչ ավելի մակերեսով խորդանոցների, սանիտարական հանգույցների և 3-րդ տիպի սանդղահարթակ դուրս եկող ելքերի) պետք է բացվեն դեպի դուրս՝ շենքից դուրս գալու ուղղությամբ:

Չի թույլատրվում՝

- ելքի նախամուտքերում, տարահանման ուղիներում (բացառությամբ բնակարանների) ստեղծել հագուստի չորանոցներ, կախիչներ, զգեստապահարաններ, պահել որևէ տեսակի գույք և նյութեր, խցանել տարահանման ելքերը.
- տարահանման ճանապարհներին ստեղծել մարդկանց ազատ տարահանմանը խոչընդոտող հարմարանքներ.
- տարահանման ճանապարհների պատերի, առաստաղների երեսապատման և հատակի ծածկման համար (բացի IV աստիճանի հրակայության շենքերից) այնպիսի նյութերի օգտագործումը, որոնք նվազ կալորիականության ջերմության

աղբյուրի՝ այրվող լուցկի, չմարած ծխախոտ և այլն, կարճատև ջերմային ազդեցությունից կարող են այրվել.

- սանդղավանդակների, միջանցքների, սրահների, նախաշեմերի ինքնափակվող դռները ֆիքսել բաց դիրքում (եթե այդ նպատակների համար չեն օգտագործվում հրդեհի դեպքում գործող ինքնաշխատ սարքեր) ինչպես նաև դրանք հանել.
- ընդհանուր միջանցքները տանող սանդղավանդակների դռները, վերելակային նախասրահների դռները և մշտապես օդի ճնշմամբ նախամուտք-արգելակների դռները պետք է ունենան ինքնափակման համար հարմարանքներ.
- տարահանման ուղիներում և սենքերում կախովի առաստաղների կմախքը պետք է իրականացնել չայրվող նյութերից.
- տարահանման ուղիներում չի թույլատրվում պտուտակային սանդուղքների և սանդղահարթակների աստիճանների սարքում, ինչպես նաև սանդղամատերի տարբեր լայնությամբ և աստիճանների բարձրությամբ սանդուղքներ.
- սանդղավանդակում, բացառությամբ նորմերում հատուկ վերապահված դեպքերի, չի թույլատրվում տեղակայել գազագծեր և այրվող հեղուկներով խողովակագծեր, ներկառուցված պահարաններ՝ բացի հրշեջ ծորակների և հաղորդակցուղիների համար նախատեսված պահարաններից, էլեկտրական մալուխներ և հաղորդալարեր (բացառությամբ՝ սանդղավանդակների և միջանցքների լուսավորման համար նախատեսված էլեկտրահաղորդալարերից):

Շինություններում տեխնոլոգիական, ցուցահանդեսային և այլ սարքավորումների տեղաբաշխման ժամանակ պետք է նախատեսել տարահանման անցումներ դեպի սանդղավանդակները և տարահանման այլ ճանապարհները՝ նախագծման նորմերին համապատասխան:

Շենքերում, մարդաշատ վայրերում էլեկտրաէներգիայի անջատման դեպքում, սպասարկող անձնակազմը պետք է ունենա էլեկտրական լապտերներ: Էլեկտրական լապտերների քանակը որոշում է ղեկավարը՝ ելնելով օբյեկտի առանձնահատկություններից, շենքում մարդկանց քանակից, բայց ոչ պակաս, քան մեկ հատ յուրաքանչյուր հերթապահի համար:

Տեխնոլոգիական պրոցեսները պետք է կատարվեն ըստ տեխնիկական շահագործման կանոնների և այլ նորմատիվ-տեխնիկական ու շահագործման փաստաթղթերի, իսկ հրդեհավտանգ և պայթյունահրդեհավտանգ նյութերի օգտագործման համար նախատեսված սարքավորումները պետք է համապատասխանեն նախագծային փաստաթղթերին:

Յուրաքանչյուր կազմակերպությունում պետք է լինեն տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ: Հրդեհավտանգ և պայթյունահրդեհավտանգ նյութերով աշխատելիս պետք է պահպանվեն ստանդարտներով նախատեսված պիտակավորման պահանջները և փաթեթավորման կամ ուղեկցական փաստաթղթերի վրա նշված նախազգուշական մակագրությունները:

Չի թույլատրվում այն նյութերի համատեղ օգտագործումը (եթե դա նախատեսված չէ տեխնոլոգիական աշխատակարգով), պահումը, տեղափոխումը, որոնց փոխազդեցության դեպքում կարող է տեղի ունենալ բռնկում, պայթյուն կամ կարող են առաջանալ այրվող և թունավոր գազեր (միացություններ):

Սարքավորումների պլանային կանխարգելիչ վերանորոգումը և նախապահպանական ստուգումը պետք է կատարվի սահմանված ժամկետներում, տեխնոլոգիական նորմերով և նախագծով նախատեսված հրդեհային անվտանգության պայմանների կատարմամբ:

Օդափոխության սարքերի (պահարաններ, ներկման, չորացման խցիկներ և այլն) խողովակաշարերի կառուցվածքը պետք է կանխի հրդեհավտանգ նստվածքների կուտակումը: Այդ սարքերի մաքրումը պետք է կատարվի հրդեհաանվտանգ եղանակներով, տեխնոլոգիական նորմերի համաձայն, և գրանցվի մատյանում:

Տեխնոլոգիական սարքավորումների, խողովակաշարերի վրա տեղադրվող կայծմարիչները, կայծորսիչները, կրակարգելիչները, փոշու, մետաղի որսիչ և հակապայթյունային սարքերը, ստատիկ էլեկտրականությունից պաշտպանող համակարգերը պետք է պահվեն աշխատանքային վիճակում:

Սարքավորումների, արտադրանքի, մասերի լվացումը, յուղազերծումը պետք է կատարվի հրդեհաանվտանգ եղանակներով, չայրվող տեխնիկական լվացման նյութերի օգտագործմամբ:

Խողովակաշարերում սառած նյութերի, սառցային, բյուրեղահիդրատային և այլ խցանումների վերացումը պետք է կատարվի տաք ջրով, գոլորշով և այլ անվտանգ եղանակներով: Այդ նպատակների համար չի թույլատրվում օգտագործել բաց կրակ:

Չի թույլատրվում պահեստների, Վերակառուցվող շինությունների վրայով անցկացնել այրվող, վառողունակ հեղուկների, դյուրավառ փոշիների, այրվող գազերի փոխադրման խողովակաշարեր:

Պայթյունահրդեհավտանգ տեղամասերում, շինություններում, արտադրամասերում աշխատանքները պետք է կատարվեն միայն կայծ չառաջացնող նյութերից (գունավոր մետաղներից) պատրաստված կամ պայթյունաանվտանգության պահանջներին համապատասխանող գործիքներով:

Արտադրության ընթացքում վառողունակ փոշեգոյացման դեպքում շինությունների պատերը, առաստաղները, կառուցվածքները և սարքավորումները պետք է կանոնավոր կերպով մաքրվեն: Մաքրման աշխատանքների պարբերականությունը սահմանվում է կազմակերպության ղեկավարի կողմից ընդունված համապատասխան իրավական ակտով:

Հակահրդեհային դռների ինքնափակման մեխանիզմները պետք է պահվեն սարքին վիճակում: Հրապատնեշող սարքերը աշխատանքային օրվա վերջում պետք է փակվեն:

Մշակման խցիկներում, յուղային վաննաներում ջերմաստիճանը պետք է հսկվի ինքնաշխատ սարքերով:

5. ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՒՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՄԻՋՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդյունաբերական կազմակերպությունների օժանդակ շենքերի միջև հակահրդեհային միջտարածությունները ընդունվում են ըստ 4.1 աղյուսակի, իսկ արդյունաբերական և գյուղատնտեսական կազմակերպությունների Վերակառուցվող շենքերի միջև՝ ըստ ՀՀՇՆ21-01-2014 շինարարական նորմերի:

Բնակելի, հասարակական և I ու II հրակայունության աստիճանի օժանդակ շենքերից մինչև Վերակառուցվող շենքերը և I ու II հրակայունության աստիճանի ավտոտնակները եղած նվազագույն հեռավորությունը պետք է ընդունել 9 մ-ից ոչ պակաս, իսկ մինչև պոլիմերային կամ այրվող նյութերից պատրաստված ծածկերով Վերակառուցվող շենքերը՝ 15 մ:

Աղյուսակ 5.1

Շենքերի հրակայունության աստիճանը	Հակահրդեհային միջտարածությունները՝ կախված օժանդակ շենքերի հրակայունության աստիճանից, մ		
	I, II	III	IV, V
I, II	6	8	10
III	8	8	10
IV, V	10	10	15



Նկար 7.1. Վերակառուցվող շինության հակահրդեհային միջտարածությունները հարևան շինությունների նկատմամբ

Անհրաժեշտ է շենքերի միջև հակահրդեհային միջտարածություններ նախատեսել՝

- կախված շենքերի հրդեհային վտանգավորության աստիճանից և հրդեհապայթյունավտանգավորության կարգից,
- շենքերի և շինությունների միջև հակահրդեհային միջտարածությունը պետք է ընդունել շենքերի և շինությունների արտաքին պատերի կամ այլ կոնստրուկցիաների միջև: Երբ շենքերի, շինությունների վրա առկա են այրվող նյութերից պատրաստված, 1 մ-ից ավելի դուրս ցցված կոնստրուկցիաներ, ապա այդ միջտարածությունը պետք է ընդունել այդ կոնստրուկցիաների միջև,
- առանց բացվածքների (պատուհանների, դռների) շենքերի և շինությունների միջև այդ միջտարածությունները թույլատրվում է փոքրացնել 20%-ով, պայմանով, որ ծածկը պատված լինի չայրվող նյութի պաշտպանիչ շերտով՝ բացառությամբ V հրակայունության աստիճանի շենքերի,
- I և II հրակայունության աստիճանի շենքերի միջև այդ միջտարածությունները (բացառությամբ Գ1.1 և Գ4.1 դասի) թույլատրվում է չնորմավորել, պայմանով,

որ մեկը մյուսի դիմաց տեղակայված ավելի բարձր (լայն) շենքի պատը, որը հանդիսանում է I տեսակի հակահրդեհային, և ավելի ցածր (լայն) շենքի պրոյեկցիայի սահմանից ուղղահայաց ուղղությամբ առլույս 8 մ, իսկ հորիզոնական ուղղությամբ 4 մ հեռավորության վրա չունենա բացվածքներ:

6. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՐՏԱՔԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐՄԱՆ

6.1. ՍԱՌԸ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Ջրմուղի ներքին համակարգերը (խմելու-կենցաղային, Վերակառուցվող, հակահրդեհային) ներառում են՝ ներանցումներ, ջրաչափական հանգույցներ, բաժանարար ցանցեր, կանգնակներ, սանիտարական սարքերին և տեխնոլոգիական սարքավորումներին մոտեցվող խողովակներ և ջրաբաշխիչ սարքավորանքներ, փակող ու կարգավորող արմատուր: Տեղական պայմաններից և արտադրության տեխնոլոգիայից կախված, ջրամատակարարման ներքին համակարգում կարող են ներառվել նաև պոմպային կայանքներ և պաշարապահ ու կարգավորման ծավալներ:

Ջրմուղի ներքին համակարգի ընտրությունը պետք է կատարել ելնելով տեխնիկատնտեսական նպատակահարմարությունից, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային պահանջներից, հաշվի առնելով նաև արտադրության տեխնոլոգիական պահանջները: Չի թույլատրվում խմելու-կենցաղային ջրմուղների ցանցերի միացումը ջրմուղի այլ ցանցերին, որոնցով տրվում է ոչ խմելու որակի ջուր:

Վերակառուցվող ջրմուղի համակարգերը պետք է բավարարեն տեխնոլոգիական պահանջներին և չառաջացնեն սարքերի ու խողովակաշարերի քայքայում, ինչպես նաև դրանցում աղերի կուտակում ու կենսաբանական գոյացումներ:

Շենքերում (շինություններում) դրանց նշանակությունից կախված նախատեսել է ներքին ջրմուղների հետևյալ համակարգեր՝

- խմելու-կենցաղային,
- հակահրդեհային,
- Վերակառուցվող (մեկ կամ մի քանի):

Խմելու-կենցաղային կամ Վերակառուցվող ջրմուղներ ունեցող շենքերում (շինություններում), հակահրդեհային ջրմուղի համակարգը պետք է միացնել նշված համակարգերից որևէ մեկի հետ:

Վերակառուցվող և օժանդակ շենքերում, կախված արտադրության տեխնոլոգիայի պահանջներից և արդյունաբերության տարբեր բնագավառներում նախագծման նորմատիվ փաստաթղթերին համապատասխան ջրի ծախսի կրճատման նպատակով պետք է նախատեսել շրջադարձային և ջրի կրկնակի օգտագործման համակարգեր: Տեխնոլոգիական լուծույթների, արտադրանքի և սարքավորումների հովացման համար ջրամատակարարման շրջադարձային համակարգերը, տեխնիկական հնարավորության

դեպքում, պետք է նախագծել առանց շիթի խզման հովացուցչին ջրի մատակարարմամբ՝ օգտագործելով մնացորդային ճնշումը:

6.2. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՐՏԱՔԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐՄԱՆ

Այս բաժինը լրացվել է նախագծային բնութագրերի հիման վրա՝ հաշվի առնելով ընթացիկ կարգավորող նյութեր.

ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում եվ ջրահեռացում»

Նախագիծը պարունակում է պայմաններ, որոնք ապահովում են.

- օգյեկտի տեխնոլոգիական կարիքների համար մաքուր ջրի սպառման կրճատում՝ վերամշակման ջրամատակարարման համակարգերի կազմակերպման միջոցով.
- վերացնել աղտոտված կեղտաջրերի արտահոսքը ջրային մարմիններ.
- կենցաղային կեղտաջրերի մաքրում.

Ջրի հաշվարկային սպառումը

Կենցաղային, խմելու կարիքների համար ջրի հաշվարկային սպառումը որոշվում է համաձայն ՇՆևԿ 2.04.01-85.

Տեխնոլոգիական կարիքների համար ջրի սպառման ծավալներն ընդունված են պատվիրատուի կողմից տրամադրված տվյալների համաձայն:

Արտադրական նշանակության սենքերում ներքին հրդեհաշիջման համակագի համար նախատեսել հրշեջ ծորակներ, առնվազն մեկ կետով յուրաքանչյուր հարկի համար, համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014-ի պահանջների:

7. ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԵՎ ԾԱՎԱԼԱ-ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ, ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՀՐԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ՎՏԱՆԳԻ ԴԱՍԸ

Շինությունների հրակայունության աստիճանը որոշվում է ըստ շինարարական կոնստուկցիաների՝ համաձայն «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի՝ (ընդունված 18.04.2001թ), ՇՆևԿ-ի «Հրդեհային պաշտպանության համակարգերի: Պաշտպանված օբյեկտների հրակայունության ապահովում» և ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի եվ շինությունների հրդեհային անվտանգություն»

Հրդեհի դեպքում շենքերի ընդհանուր կայունությունն ու երկրաչափական անփոփոխությունն ապահովելու համար նախագիծը ընդունել է շենքի կառուցվածքի տարրերի հետևյալ հրակայունության աստիճանների, համաձայն աղյուսակ 7.1-ի պահանջների:

Աղյուսակ 7.1. - Շենքերի կառույցների հրդեհային դիմադրություն

Շենքերի կոնստրուկտիվ բնութագրերը կախված հրակայունության աստիճանից

Շենքերի կոնստրուկցիաների հրակայունության աստիճանը	Բնութագիր
I	Շենքեր, որոնց կրող կամ պատող կոնստրուկցիաները բնական կամ արհեստական քարե, բետոնե կամ երկաթբետոնե շինանյութերից են՝ թերթավոր և սալիկային չայրվող նյութերի օգտագործմամբ
II	Շենքեր, որոնց կրող կամ պատող կոնստրուկցիաները բնական կամ արհեստական քարե, բետոնե կամ երկաթբետոնե շինանյութերից են, օգտագործվում են թերթավոր և սալիկային չայրվող շինանյութեր: Շենքերի ծածկերում կարելի է օգտագործել չպաշտպանված պողպատե կոնստրուկցիաներ:
III	Շենքեր, որոնց կրող կամ պատող կոնստրուկցիաները բնական կամ արհեստական քարե, բետոնե կամ երկաթբետոնե շինանյութերից են: Միջհարկային ծածկերի համար կարելի է օգտագործել փայտե կոնստրուկցիաներ, պաշտպանված ծեփասվաղով կամ դժվար այրվող թիթեղային և սալիկային նյութերով: Ծածկի տարրերին հրակայունության և կրակի տարածման սահմանների վերաբերյալ պահանջներ չեն ներկայացվում, ընդ որում, ձեղնահարկի ծածկի փայտե կոնստրուկցիաները պետք է տոգորված լինեն

	հրապաշտպան նյութերով:
Նախագծի կառուցվածքային լուծումները ուղղված են՝

- Հրդեհի առաջացման բացառման և կանխարգելման;
- Մարդկանց և գույքի պաշտպանության ապահովմանը;
- Հրդեհի վտանգավոր գործոնների ազդեցության նվազեցմանը շրջակա միջավայրի վրա:

Մինչև օբյեկտի շահագործումը նախատեսվում է ապահովել՝

- Հրդեհավտանգ գործոնների տարածման սահմանափակում;
- Հրդեհի տարածման կանխարգելում;
- Մարդկանց անվտանգ տարածք ներգրավում;
- Հրդեհային ծառայությունների անձնակազմի հասանելիություն և միջոցների տրամադրում;
- Հրդեհային նյութերի մատակարարում;
- Փրկարարական և վնասազերծման միջոցառումների հնարավորություն:

Տեխնիկական լուծումները համապատասխանում են ՀՀ հրդեհային նորմերին և ապահովում են մարդու կյանքի և առողջության համար անվտանգ շահագործում:

8.1 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Աշխատանքային վայրերի կազմակերպումը, պարունակությունը, աշխատանքային մեթոդները և սանիտարական կանոնները ընդունվում են նախագծում ՀՂ-010-2013 համաձայն:

8.2 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օբյեկտի աշխատանքային վայրերում անվտանգ աշխատանքային պայմանների ստեղծման միջոցառումները առաջնահերթություն են, որոնք ուղղված են աշխատողների առողջության, աշխատունակության պահպանմանը և աշխատանքային ժամանակի կորուստների նվազեցմանը:

Այդ միջոցառումները մշակված են և համապատասխան են Հայաստանի Հանրապետության աշխատանքի պաշտպանության օրենսդրությանը:

Աշխատողների ապահովումը հատուկ հագուստով, կոշիկով, անհատական պաշտպանիչ միջոցներով, լվացվող կամ վնասազերծող միջոցներով իրականացվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջների համաձայն՝ «Աշխատողներին ապահովելու կանոններ հատուկ հագուստով, կոշիկով և այլ անհատական պաշտպանիչ միջոցներով» և գործող այլ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա:

Աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման համար

ծախսերի կազմը և կառուցվածքը սահմանվում է հատուկ ոլորտային փաստաթղթերով։

8.3 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ըստ գործող օրենսդրության և ոլորտային նորմատիվ փաստաթղթերի՝ կազմակերպությունում անվտանգ պայմանների և աշխատանքի պաշտպանության ապահովման պարտավորությունը դրվում է գործատուի վրա։

Արտադրական-տեխնոլոգիական ստորաբաժանումներում աշխատողներին առողջ և անվտանգ պայմաններ ապահովելու պարտականությունը դրվում է տնօրենին, իսկ աշխատանքի պաշտպանության, արդյունաբերական, հրդեհային և էկոլոգիական անվտանգության կազմակերպումն իրականացնում է գլխավոր ինժեների միջոցով համապատասխան ստորաբաժանումների և առանձին կատարողների։

Աշխատանքի պաշտպանության մասնագետները կազմակերպվում են հետևյալ խնդիրների իրականացման համար՝

- Աշխատողներին աշխատանքի պաշտպանության պահանջների կատարման կազմակերպում;
- Աշխատողների կողմից օրենքների, այլ նորմատիվ ակտերի, կոլեկտիվ պայմանագրի, տեղական կանոնակարգերի պահպանման վերահսկում;
- Նախազգուշական աշխատանքների կազմակերպում՝ արտադրական վնասվածքների, մասնագիտական հիվանդությունների կանխարգելման և աշխատանքային պայմանների բարելավման նպատակով;
- Աշխատողների և ղեկավարության տեղեկատու-համապահովում աշխատանքի պաշտպանության հարցերում;
- Աշխատանքի պաշտպանության լավագույն փորձի ուսումնասիրություն և տարածում, իրազեկում։

Աշխատանքի պաշտպանության մասնագետները վերահսկում են՝

- Աշխատողների կողմից օրենքների և նորմատիվ ակտերի պահպանումը;
- Անհատական և կոլեկտիվ պաշտպանիչ միջոցների ապահովումը և ճիշտ օգտագործումը;
- Աշխատանքի բարելավման և պաշտպանության ծրագրերի կատարման վերահսկումը;
- Աշխատանքի պաշտպանության հրահանգների առկայությունը և ժամանակին վերանայումը;
- Պաշտպանիչ սարքերի և սարքավորումների վիճակը;
- Աշխատանքի անվտանգության ուսուցումների և գիտելիքների ստուգումների ժամանակին անցկացման վերահսկում;
- Աշխատանքային վայրերի կազմակերպումը աշխատանքային անվտանգության պահանջներին համապատասխան;
- Աշխատանքի պաշտպանության միջոցների նպատակային օգտագործումը։

8.4 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատակիցների, այդ թվում՝ նախագծվող օբյեկտի արտադրական անձնակազմի ապահովագրություն նախատեսված չէ։

8.5 ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Լրացուցիչ արձակուրդ և կրճատված աշխատանքային օր տրամադրվում են աշխատողներին, ինժեներ-տեխնիկական անձնակազմին և պաշտոնյաներին ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն։

Նախագծվող օբյեկտում աշխատանքի պայմաններից ելնելով, լրացուցիչ արձակուրդի իրավունքը հատուկ որևէ աշխատող չի ունենալու։

8.6 ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՎՆԱՍԱԿԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 27-ի №347-Ն որոշման, համապատասխան հոդվածների համաձայն, ծանր, վնասակար կամ վտանգավոր աշխատանքների վարձատրությունը պետք է վճարվի բարձրացրած դրույքով, սակայն նախագծվող օբյեկտում նման վճարներ չեն նախատեսվում։

Անհատական լրացուցիչ վճարների կամ բարձրացված դրույքների անհրաժեշտության որոշումը կկայացվի աշխատանքային վայրերի պլանային աթեստացիայից հետո։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, ընդունված 14.12.2004թ։
2. ՀՀ կառավարության որոշում № 1089-Ն, ընդունված15.07. 2004թ.
3. ՀՀ ՍՆևԿ 2.2-002-05 «Աշխատանքի հիգիենիկ դասակարգումը ըստ արտադրական միջավայրի վնասակար եվ վտանգավոր գործոնների, աշխատանքային գործընթացի ծանրության եվ լարվածության ցուցանիշների»
4. ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում»
5. ԳOUS 12.004-2015 Աշխատանքի անվտանգության ստանդարտների համակարգ. Աշխատանքի անվտանգության ուսուցում. Ընդհանուր դրույթներ
6. ՀՀ Կառավարության որոշում № 1007-Ն, ընդունված 29.06.2006թ.
7. ՀUS ԻUO 45001-2019 Աշխատողի առողջության և աշխատանքի անվտանգության կառավարման համակարգեր. Պահանջներ և կիրառման ուղեցույց
8. ГОСТ 12.2.003-91 Система стандартов безопасности труда. Оборудование производственное. Общие требования безопасности.
9. ГОСТ 12.3.002-2014 Система стандартов безопасности труда (ССБТ). Процессы производственные. Общие требования безопасности (Переиздание)
10. ГОСТ Р 12.4.026-2001 «Цвета сигнальные, знаки безопасности и разметка сигнальная».
11. СТО Газпром 2-3.5-454-2010 «Правила эксплуатации магистральных газопроводов»
12. СТО Газпром 18000.1-002-2020 «Идентификация опасностей и управление рисками в области производственной безопасности»
13. СТО Газпром РД 1.14-139-2005. «Классификатор групп производственных процессов по санитарным характеристикам»
14. Р Газпром 148-2014 Гигиеническая оценка факторов рабочей среды и трудового процесса при эксплуатации механических транспортных средств на объектах
15. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 որոշումը՝ «Ծանր և վնասակար կամ վտանգավոր պայմաններով աշխատանքների ցանկը հաստատելու մասին»:
16. ՀԴ-010-2013 ՀՀ Էկոնոմիկայի նախարարաի հրաման N 872-Н от 19.09.2013г.
17. ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն»

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

«ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Լիցենզիա № ՔՊԼ-001233 առ 23.09.2024թ.

Պատվիրատու – «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ 43/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1-013-25 ՔՊ և ԱԻ

Հատոր 6

Տնօրենի տեղակալ- գլխավոր ճարտարագետ՝		Հ. Իսպիրյան
ՆՀԲ պետ		Գ. Ալավերդյան
Նախագծի գլխավոր ճարտարագետ՝		Ա. Վարդանյան

2025

Գրքի, հատորի համար	Նշանակումը	Անվանումը	Ծանոթություն
Օբյեկտ՝ **«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Թբիլիսյան խճուղի 43/2 հասցեում գտնվող շենքի հիմնանորոգում**			
Աշխատանքային նախագիծ			
1	ԸԲ	Ընդհանուր բացատրագիր	
2	**ՃՇ**	**Ճարտարապետաշինարարական մաս**	
2.1	Ճ	Ճարտարապետական լուծումներ	
2.2	ԵԿ	Կոնստրուկտիվ լուծումներ	
3	**ԻՑՍ**	**Ինժեներական ցանցեր և սարքավորումներ**	
3.1	ԷՄ	Էլեկտրամատակարարման համակարգ	
3.2	ՀԱ Կ ՊԱ	Հրդեհային ազդանշանում Հեռահաղորդակցման համակարգեր Պահպանության տեսահսկման և ազդանշանային համակարգ	
3.3	Գ	Գազամատակարարում	
3.4	ՋԿ	Ջրամատակարարման և կոյուղու համակարգեր	
3.5	ՋՕ	Ջեռուցում և օդափոխություն	
4	ՀԱ	Հրդեհային անվտանգության միջոցառումներ	
5	ԱՊ	Աշխատանքի պայմաններ և կազմակերպում	
6	ՔՊ և ԱԻ	Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ	
7	ՏԱՊ	Տեռորիստական ակտերի դեմ պայքարի միջոցառումներ	
8	Ն	Շինարարական աշխատանքների նախահաշիվ	

Согласовано

Взам. инв. №

Подп. и дата

Инв. № подл.

Փոփ	Մասն	Թերթ	№աստ	Ստորգ.	Ամ.ա	1-013-25 ՆԿ		
ՆԳՃ		Վարդանյան			05.2025	Նախագծի կազմը	Փուլ	Թերթ	Թերթեր
							ԱՆ	1	1
							Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ		

Բովանդակություն

1 Ելակետային փաստաթղթեր.....6
Հապավումներ 7
Օգտագործվող հիմնական հասկացությունները.....8
2. Օբյեկտի նկարագիրը.....13
2.1. Ընդհանուր տեղեկություններ 13
3. Արտակարգ իրավիճակների հետեվանքները և դրանց վերացումը 17
3.1. Հնարավոր վթարային պայմաններ 17
3.2 Տեխնիկական սարքերի և սարքավորումների անվտանգության պահանջների ապահովում 21
3.3 Շենքերի, շինությունների և տարածքների անվտանգության պահանջների ապահովում 22
4. Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանությունը 24
4.1. Արտակարգ իրավիճակ հայտարարելը և գործողության դադարումը.....25
4.2. Արտակարգ ԵՎ վթրային իրավիճակների կանխարգելում.....26
4.3. Արտակարգ իրավիճակներին արձագանքումը 29
5. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումները 32
6. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումները 34
7. Բնակչության և աշխատակիցների տարահանումը 36
7.1. Տարահանման կարգը 36
7.2. Տարահանման պլան ԵՎ տարահանման ժամանակ 39
7.3. Բնակչության ԵՎ աշխատակիցների ազդարարումը 43
8. Օբյեկտի քաղաքացիական պաշտպանության կառավարման լուծումներ, ռազմական գործողությունների ընթացքում կամ այդ գործողությունների հետևանքով առաջացող վտանգների մասին անձնակազմին նախազգուշացնելու համակարգեր.

Согласовано

Взам. инв. №

Подп. и дата

Инв. № подл.

						1-013-25 ՔՊ և ԱԻ		
				Ստոր.	Ամս.			
ՆԳՃ		Վարդանյան				Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումները	Փուլ	Թերթ	Թերթեր
							Р	1	64
Նախագծող		Սարգսյան					«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ		

45
8.1. Լուսային և այլ տեսակի քողարկման միջոցառումներ.....46
8.2. ՔՊ և ԱԻ-ում բնակչության պաշտպանության համակարգերի նախապատրաստման տարեկան հիմնական միջոցառումների պլան 47
8.3. Արտակարգ իրավիճակների հիմնահարցերով ուսուցման ծրագիր 51
9. Վթարափրկարարական և վերականգնողական աշխատանքներ 56
10. Աղետների ռիսկի կառավարման ու բնակչության պաշտպանության նյութատեխնիկական ապահովումը և ֆինանսավորումը.....59
Օգտագործված գրականությունը 60
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 61
Լիցենզիա……62
«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ 24.06.2024 Թ. № Ն/29/26655-2024 ԳՐՈՒԹՅՈՒՆ 63

1 ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

– «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 21.08.2024թ. №Ն/29/36146-2024 գրություն
– Մասնաշենքի տեխնիկական վիճակի գնահատման եզրակացություն՝ տրված «Սեյսմաէքսպերտ» ՍՊԸ կողմից:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՆԳՆ	Ներքին գործերի նախարարություն
ՓԾ	Փրկարար ծառայութնուն
ԱԻ	Արտակարգ իրավիճակ
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՄՄԼԿ	Միջգերատեսչական միացյալ լրատվական կենտրոն
ՃԿԱԿ	Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) **ազդարարում՝** արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի դեպքում պետական մարմիններին, պետական կառավարման համակարգի մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին և բնակչությանն ազդարարման համակարգերով և այլ միջոցներով (եղանակներով) ազդարարման ազդանշանների, տագնապի կամ հավաքի, հնարավոր վտանգների, ինչպես նաև վարքականոնների և պաշտպանական միջոցառումների անցկացման անհրաժեշտության մասին հրատապ տեղեկատվության տրամադրում.

2) **աղետ՝** համայնքի կամ հասարակության բնականոն կենսագործունեությունը խաթարող արտակարգ իրավիճակ, որի հետևանքների վերացումը և հետաղետային վերականգնումը գերազանցում են սեփական ուժերով հաղթահարելու կարողությունը.

3) **աղետի գոտի՝** *տուժած տարածք,* որտեղ արտակարգ իրավիճակի հետևանքների վերացման և հետաղետային վերականգնման համար պահանջվում են լրացուցիչ ուժեր, միջոցներ, նյութական պաշարներ կամ միջազգային հանրության օգնությունը.

4) **աղետի ռիսկ՝** որոշակի տարածքում որևէ ժամանակահատվածում հնարավոր աղետ առաջացնող վտանգի ներգործության և խոցելիության հավանական չափն է՝ արտահայտված մարդկանց կյանքի, առողջության, կենսաապահովման միջոցների, գույքի և ունեցվածքի հնարավոր կորուստներով, շրջակա միջավայրի վիճակի վատթարացմամբ և ծառայությունների խափանմամբ.

5) **աղետների ռիսկի գնահատում՝** աղետների ռիսկի բնույթն ու չափը որոշելու որակական և քանակական մոտեցմամբ արտահայտված վերլուծական գործընթաց.

6) **աղետների ռիսկի կառավարում՝** աղետների ռիսկի նվազեցմանը, պատրաստվածության բարձրացմանը, արտակարգ իրավիճակներին արձագանքմանն ու հետաղետային վերականգնմանն ուղղված որոշումների ընդունման, իրականացման և վերահսկման հետևողական գործընթաց.

7) **աղետների ռիսկի նվազեցում՝** վտանգի գնահատման, կանխման, կանխարգելման, բնակչության խոցելիության նվազեցման և կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների համալիր.

8) **աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության համակարգի սուբյեկտներ՝** Հայաստանի Հանրապետության կառավարությունը, պետական մարմինները, պետական կառավարման համակարգի մարմինները, տարածքային

կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները և բնակչությունը.

9) **անհետաձգելի արձագանքման աշխատանքներ՝** շտապ բժշկական օգնության ցուցաբերում, սանիտարահակահամաճարակային միջոցառումների իրականացում, տարածքի վարակազերծում.

10) **արտակարգ իրավիճակ՝** իրադրություն, որն առաջացել է որոշակի տարածքում կամ օբյեկտում բնական, կլիմայական, տեխնոլոգիական, կենսաբանական (համաճարակ, անասնահամաճարակ, բույսերի վարակիչ հիվանդություններ) վտանգավոր երևույթների, զենքի տեսակների կիրառման հետևանքով և հանգեցրել է կամ կարող է հանգեցնել մարդկային զոհերի, մարդկանց առողջության վատթարացման, շրջակա միջավայրի վնասման, նյութական կորուստների և կենսագործունեության բնականոն պայմանների խախտման.

11) **արտակարգ իրավիճակի գոտի՝** տարածք, որի սահմաններում տեղի է ունեցել արտակարգ իրավիճակը.

12) **արտակարգ իրավիճակների հետևանքների վերացում՝** արտակարգ իրավիճակներում փրկարարական, վթարավերականգնողական և անհետաձգելի արձագանքման աշխատանքների կատարում, մարդկանց կյանքի, առողջության ու կենսագործունեության առաջնահերթ պայմանների ապահովում, բացասական գործոնների հնարավոր զարգացումների կանխում և կանխարգելում.

13) **արտակարգ իրավիճակներին արձագանքման միջոցներ՝** փրկարարական, վթարավերականգնողական, անհետաձգելի արձագանքման աշխատանքների իրականացման համար նախատեսված տեխնիկական, գիտատեխնիկական կամ մտավոր արտադրանք, տեխնիկա, սարքեր, սարքավորումներ, հանդերձանք, գույք, այդ թվում՝ կառավարման և կապի հատուկ միջոցներ, մեթոդական նյութեր, համակարգչային ծրագրեր և տվյալների բազա.

14) **արտակարգ իրավիճակներին արձագանքման ուժեր՝** արտակարգ իրավիճակներին արձագանքման և վերականգնողական աշխատանքների իրականացման նպատակով՝ պետական կառավարման համակարգի մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին ենթակա ուժեր.

15) ***բնակչության պաշտպանություն՝*** *արտակարգ իրավիճակներից մարդկանց կյանքի և առողջության պաշտպանությանը, բնականոն կենսագործունեության ապահովմանն ուղղված իրավական, կազմակերպական, ինժեներատեխնիկական փոխկապակցված միջոցառումների համալիր.*

16) **իրազեկում՝** պետական մարմիններին, պետական կառավարման համակարգի մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին և բնակչությանն ազդարարման համակարգերով, զանգվածային լրատվական և այլ միջոցներով (եղանակներով) աղետների ռիսկի նվազեցման, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, հետաղետային վերականգման ընթացքում նախատեսվող կամ իրականացվող միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև խուճապի կանխման ու քարոզչության նպատակով տեղեկատվության տրամադրում.

17) **լիազոր մարմին՝** բնակչության պաշտպանության համակարգի սուբյեկտների պատրաստվածության համակարգման, աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության մշակման, համակարգման և իրականացման պետական կառավարման համակարգի մարմին.

18) **խոցելիություն՝** վտանգի, վտանգավոր երևույթի ազդեցությանը ենթակա տարածքում առկա բնակչության և նրանց կենսագործունեությունն ապահովող տարրերի (շենք, շինություն, ջրային և հողային ռեսուրսներ, ենթակառուցվածքներ և այլն) վնասվելու հակվածության աստիճանը.

19) **կարողություն՝** պետության, համայնքի, կազմակերպության, անհատի մոտ առկա բոլոր հնարավորությունների, հատկանիշների և ռեսուրսների (նյութական, ֆիզիկական, մտավոր) միասնություն, որը կարող է օգտագործվել աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության ոլորտում սահմանված նպատակներին հասնելու համար.

20) **կարևորագույն նշանակության օբյեկտներ՝** բնակչության կենսագործունեությունն ապահովող (ջրամատակարարման, կոյուղու, հոսող ջրերի մաքրման, ջերմամատակարարման, հիդրոտեխնիկական, էներգետիկ և պետության ռազմավարական շահերի համար հատուկ նշանակություն ունեցող) պետական, համայնքային նշանակության և մասնավոր օբյեկտներ.

21) **կենսաապահովում՝** բնակչության կենսագործունեության համար նրա ֆիզիոլոգիական, առողջական, նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման նպատակով անհրաժեշտ նվազագույն պայմանների ստեղծում և պահպանում.

22) **նյութական պաշարներ՝** արտակարգ իրավիճակների կանխման, կանխարգելման և բնակչության պաշտպանության համակարգի պատրաստվածության, ինչպես նաև արտակարգ իրավիճակներին արձագանքելու, կենսաապահովման, հետաղետային

վերականգնման համար անհրաժեշտ նյութեր, դեղամիջոցներ, սնունդ, ջուր, պարագաներ, հանդերձանք և այլ միջոցներ.

23) **պատրաստվածություն՝** համայնքի և հասարակության կարողությունն է՝ ուղղված աղետների ռիսկի կառավարմանն ու բնակչության պաշտպանությանը.

24) ***վթարավերականգնողական աշխատանքներ՝*** *առաջնահերթ աշխատանքներ՝ ուղղված մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող այնպիսի գործոնների ազդեցության վերացմանը, որոնք խոչընդոտում են մարդկանց որոնելուն և փրկելուն, ինչպես նաև շենքերի, շինությունների ամրացմանը կամ քանդմանը, հեղուկ վառելիքի, գազի, էլեկտրաէներգիայի և ջրի աղբյուրների վթարային անջատմանը, բնակչության ու փրկարարների կենսապահովումն իրականացնող առաջնահերթ կազմակերպությունների վերականգնմանը, վերանորոգմանը և տարածքի սանիտարական մաքրմանը.*

25) **վտանգ՝** երևույթ, գործընթաց, գործունեություն, իրադարձություն, նյութ, որը կարող է հանգեցնել մարդկային զոհերի, նրանց առողջության վատթարացման, կենսապահովման միջոցների, գույքի և նյութական կորուստների, սոցիալական, տնտեսական գործունեության և ծառայությունների խաթարումների, բնապահպանական և այլ վնասների.

26) ***վտանգի կանխարգելում՝*** *վտանգի հնարավոր բացասական ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումներ.*

27) ***վտանգի կանխում՝*** *վտանգ առաջացնող գործոնների բացահայտմանը, գնահատմանը և վերացմանն ուղղված միջոցառումներ.*

28) ***տարահանում՝*** *վտանգավոր տարածքից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների, նյութական և մշակութային արժեքների ժամանակավոր տեղափոխում, անհրաժեշտության դեպքում տեղաբաշխում ու կենսապահովում.*

29) ***տարահանման հանձնաժողով՝*** *նշանակված կազմ, որը կազմակերպում ու ղեկավարում է տվյալ տարածքի բնակչության, կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) (այսուհետ՝ կազմակերպություն), նյութական և մշակութային արժեքների տարահանման միջոցառումները.*

30) ***տարահանման հավաքակայան՝*** *տարահանվող բնակչության ընդունման և հաշվառման հավաքատեղի.*

31) ***ընդհանուր տարահանում՝*** *տվյալ տարածքի (բնակավայրի) ամբողջ բնակչության տարահանում.*

32) ***մասնակի տարահանում*** *՝ մինչև 16 տարեկան երեխաների, հղի և մինչև 8 տարեկան երեխա ունեցող կանանց, 8-16 տարեկան երեխա ունեցող այն կանանց, որոնց ընտանիքների կազմում չկան տարահանման ենթակա՝ աշխատունակ անդամներ, հաշմանդամների և կենսաթոշակառուների տարահանում կամ տվյալ տարածքի բնակչության մի մասի տարահանում.*

33) ***Տարահանման երթուղի*** *՝ տարահանվող բնակչության բնակավայրը տեղաբաշխման բնակավայրին միացնող ճանապարհ (ճանապարհահատված).*

34) ***տարահանման ավտոշարասյուն*** *՝ տարահանման հավաքակայանից (բնակավայրերից) ընդունման հավաքակայան (բնակավայր) մեկնող երկու կամ ավելի ավտոմեքենայից բաղկացած շարասյուն.*

35) ***տարահանման հետիոտն շարասյուն*** *՝ տարահանման հավաքակայանից (բնակավայրից) ընդունման հավաքակայան (բնակավայր) տեղափոխվող հետիոտն կազմակերպված խումբ.*

36) ***տարահանման պլան*** *՝ նախապես մշակված փաստաթուղթ, որով կանոնակարգվում են մեկ տարածքից (բնակավայրից, կազմակերպությունից) մեկ այլ տարածք բնակչության (աշխատողների) տեղափոխման, տեղաբաշխման և բազմակողմանի կենսապահովման միջոցառումները, ինչպես նաև՝ նյութական և մշակութային արժեքների տեղափոխումը և պահպանումը.*

37) ***տարահանման միջոցառումներ*** *՝ արտակարգ իրավիճակներում կամ ռազմական դրության ժամանակ վտանգավոր տարածքից անվտանգ տարածք բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման ապահովման միջոցառումների համալիր.*

38) ***տարահանման մարմիններ*** *՝ մարմիններ, որոնց վրա անմիջականորեն դրվում են բնակչության տարահանման պլանավորումը, կազմակերպումը և իրականացումը.*

39) ***տարահանման միջանկյալ կետ*** *(կարճաժամկետ տեղակայման կետ)՝ ստեղծվում է վտանգավոր գոտու սահմաններից դուրս՝ մոտակա բնակավայրերին և հաղորդակցման ուղիներին մոտ.*

40) **տուժած բնակչություն՝** արտակարգ իրավիճակից կորուստներ և վնասներ կրած բնակչություն.

41) **փրկարարական աշխատանքներ՝** միջոցառումների համալիր ուղղված մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների հայտնաբերմանը, փրկմանը և համապատասխան օգնության ցուցաբերմանը։

2. ՕԲՅԵԿՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերակառուցվող շինությունը գտնվում է ՀՀ Քաղաք Երևան, Արաբկիր վարչական շրջան, Թբիլիսյան խճուղի 43/2 հասցեյում: Կադաստրային ծածկագիրը (01-003-0402-0294):

Հողամասում գոյություն ունի արտադրամաս, բաղկացած մեկ կիսանկուղային հարկից և երկու վերնահարկից: Արտադրամասի արտաքին չափերն են 13.00 մ x 30.00 մ: Բարձրությունը 12.00 մ: Տանիքը միալանջ է, թիթեղյա, կազմակերպված ջրահեռացմամբ:

Նկար 3.1. Վերակառուցվող օբյեկտի իրավիճակային պլանը

Արտադրամասին կից առկա է 84.00 քմ մակերեսով միահարկ կցակառույց, որը նախատեսվում է քանդել:

Արտադրամասը տեղակապված է հողամասի անմիջապես սահմանով: Շենքը կազմված է ե/բ կմախքից, պատի պանելներից և ծածկի պանելներից: Շենքի կիսանկուղային հարկից առկա է ելք դեպի կողքի հողամաս, որը նույնպես հանդիսանում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ - ի սեփականություն: Ներկայումս շենքն ունի թվով 2 մուտքեր, որոնք գտնվում են հողամասի սահմանից դուրս:



Նկար 2.2. Վերանորոգվող օբյեկտի հատակագիծը

Նախագծով նախատեսվում է.

1. Ապամոնտաժել շենքին կից միահարկ կցակառույցը,
2. Ապամոնտաժել շենքի տանիքը,
3. Ապամոնտաժել շենքի պատի պանելները և գոյություն ունեցող պատուհանները,
4. Ապամոնտաժել գոյություն ունեցող հողամասի սահմանից դուրս գտնվող թվով 2 մուտքերը,
5. Ապամոնտաժել շենքի ներքին բոլոր պատերը, թողնել միայն ե/բ կմախքը,
6. Կառուցել կցակառույց վերակառուցվող շենքին կից,
7. Արտաքին պատերը շարել ե/բ ծածկի վրա, պատի պանելների փոխարեն, ինչի արդյունքում շենքի արտաքին մակերեսը կփոքրանա և շինության արտաքին պատերը հողամասի սահմանից կհեռանան ամենաքիչը 100 մմ -ով,
8. Պատերը նախատեսվում է շարել 200 մմ հաստությամբ, տուֆով կամ բետոնե բլոկերով, արտաքինից ջերմամեկուսացնել և երեսապատել բնական քարով

կամ սվաղ-ներկով,

9. Շենքի կցակառույցից նախատեսել գլխավոր մուտքը, 600մմ բարձր ասֆալտի նիշից, աստիճաններով և ԲՄԽ - ների համար աստիճան բարձրացնող էլեկտրական սարքով,
10. Մյուս մուտքը նախատեսել կիսանկուղային հարկից, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի սեփականություն հանդիսացող կից հողամասի տարածքից, կառուցելով 1500 մմ լայնությամբ դեպի 0.00 նիշ իջնող աստիճան,
11. Շարել ներքին պատերը նախագծով նշված հատվածներում,
12. Պահպանել գոյություն ունեցող աստիճանները,
13. Շենքի տանիքը նախատեսել հարթ, կազմակերպված ջրահեռացմամբ, կցակառույցից նախատեսել ելք դեպի հարթ տանիք սպասարկման համար,
14. Շենքը երեսապատել տրավերտինով, բազալտով, տուֆով,սվաղով և ներկով (նախագծով նշված հատվածներում),

Շենքը ծառայելու է որպես արտադրական և գրասենյակային նշանակության շինություն: Ներսում նախատեսվում է տարածքը բաժանել.

-1 հարկ.

1. Նախատեսվում է -1 հարկը բաժանել արտադրականն սենքերի, պահեստասենյակների, որտեղ պահվելու են մետաղական խողովակներ, դետալներ և գործիքներ,
2. Նախատեսվում է ունենալ 2 սանհանգույց, լոգարաններով:
3. Արտադրական սենք 1 ում և 2 ում նախատեսվում է ունենալ պատուհաններ, վերևում տեղադրված:

1-ին հարկ.

1. Կցակառույցում անմիջապես մուտքի դիմաց նախատեսել պահակակետ,
2. Տվյալ հարկի մնացած հատվածը բաժանել աշխատասենյակների,
3. Իրականացնել տղամարդկանց սանհանգույց, թվով 2-ը, իսկ որպես կանացի սանհանգույց կարող է ծառայել ԲՄԽ-ների համար նախատեսված սանհանգույցը , որն ունի 1.65x1.8մ ներքին չափեր,
4. Միջանցքները նախատեսվում է անջատել աստիճաններից համապատասխան առանձին միջանցքներով:

2-րդ հարկ

1. 2-րդ հարկում նույնպես նախատեսվում է տարածքը բաժանել աշխատասենյակների, նշված հատվածներում ապակեպատումներով առանձնացված,

2. Սանհանգույցների հատվածում կրկնել 1-ին հարկի դասավորվածությունը։

3-րդ հարկ

1. Նախատեսվում է 3-րդ հարկում ունենալ թվով 2 տեխնիկական սենյակ,
2. Միջանցքից նախատեսել ելք դեպի հարթ տանիք, սպասարկումը ապահովվելու համար,
3. Տանիքի պարապետերը նախատեսել 1200 մմ բարձրությամբ։
4. Կցակառույցի տանիքը նույնպես նախատեսել հարթ, դեպի վերակառուցված շենքի տանիք ջրահեռացմամբ։

Վերակառուցման արդյունքում նախատեսվում է առաստաղների մաքուր բարձրությունը ունենալ 2800մմ, իսկ բոլոր միջանցքների և անցուղիների լայնությունները ամենաքիչը 1800մմ։ Շենքում նախատեսվող աշխատողների քանակը - 1 հարկում 6 հոգի է, 1-ին հարկում աշխատելու են ընդհանուր թվով 15 հոգի, իսկ 2-րդ հարկում նախատեսվող աշխատողների քանակը նույնպես 15 հոգի։

3. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱՑՈՒՄԸ

3.1. ՀՆԱՐԱՎՈՐ ՎԹԱՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հնարավոր վթարային իրավիճակներ կարող են առաջանալ հետևյալ դեպքերում՝

- երկրաշարժ.
- վարարում.
- սաիքեր, ճեղքեր, սելավ.
- խոշոր ֆիլտրացիա կամ խոշոր արտահոսք,
- ահաբեկչական գործողություններ,
- ռազմական ագրեսիա:

<u>Առաջարկվող գործողությունները</u> Երկրաշարժի դեպքում

Ունենալ իրազեկ ճարտարագետ, որը կզննի շենքերը և շինությունները և կգնահատի արտակարգ իրավիճակի մակարդակը: Եթե իրազեկ ճարտարագետն անմիջապես մատչելի չէ, տեխնիկական անձնակազմը պետք է կազմակերպի տարածքի շրջայց և իրականացնի վիզուալ զննում՝ մինչև իրազեկ ճարտարագետի կողմից զննման իրականացումը:

Օգտագործելով արտակարգ իրավիճակների դիագրամը, գնահատել արտակարգ իրավիճակի մակարդակը (նկ.3.1):

Եթե շենքերը և շինությունները վթարվում է կամ լրջորեն վնասված է, ընդունել արտակարգ իրավիճակի «ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» մակարդակը, անմիջապես տեղեկացնել արտակարգ իրավիճակների դիագրամում նշված համապատասխան մարդկանց և սկսել գործողությունները:

Ստուգել շենքերի և շինությունների վիճակը:

Եթե առկա է չափավոր, բայց կայուն վնասումներ, մինչև շենքեր և շինությունները կկարողանա զննել որակավորված մասնագետ՝ ընդունել արտակարգ իրավիճակի «ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿ» մակարդակը:

Եթե շենքեր և շինությունները վնասվել է, սակայն չի թվում այնքան վտանգավոր, որ կարող է պատճառել շենքեր և շինությունների վթար, ապա ընդունել արտակարգ իրավիճակի «ԴԻՏՈՒՄ» մակարդակը (գծ. 3.1): Հետևել և հաղորդել վնասվածքի բնույթի և տեղի մասին, նկարագրել սաիքերը, նստեցումները, հաղորդել կառուցվածքների վնասվածքների մասին և այլն:

Եթե պարզվի, որ շենքեր և շինությունների վթարի վերահաս վտանգ չկա, այնուամենայնիվ պետք է իրականացնել ուշադիր զննում շենքեր և շինություններների

իրազեկ ճարտարագետի կողմից, որը կստուգի `

- ճեղքերի, նստեցումների առկայությունը շենքեր և շինությունների վրա.
- շենքեր և շինությունների հիմքը՝ տեղաշարժերի նշաններ հայտնաբերելու համար.
- Ինժեներական և հիդրոտեխնիկական կառուցվածքների կառուցվածքային ամբողջականությունը.



Գծապատկեր 3.1. Արտակարգ իրավիճակի մակարդակների դիագրամ:

Առաջարկվող գործողություններ վարարման դեպքում

Եթե հաղորդվում է ծայր աստիճան ուժեղ վարարման մասին, պարբերաբար (ժամը մեկ) հետևել գետում և ջրավազաններում ջրի մակարդակին և պարբերաբար (ժամը մեկ) ստուգել իրավիճակի փոփոխությունները:

Օգտագործելով արտակարգ իրավիճակների դիագրամը, որոշել արտակարգ իրավիճակի մակարդակը (նկ.3.1):

Եթե ջրի մակարդակը շարունակում է բարձրանալ, անմիջապես տեղեկացնել արտակարգ իրավիճակների դիագրամում նշված համապատասխան մարդկանց:

Մոնիթորինգի ծրագրի շրջանակներում պետք է ստուգել առնվազն հետևյալ հատկանիշները, որոնք կարող են մատնանշել հնարավոր խնդրի առաջացման մասին՝

- շենքեր և շինությունների միջով նոր տեղերից ջուր է հոսում.
- ճեղքեր, սահքեր, նստեցումներ կամ վնասվածքի այլ նշաններ.

Եթե շենքեր և շինությունները վթարվում է, կամ լրջորեն վնասվում, կամ ջրի մակարդակը բարձրանում է առավելագույն՝ մակարդակից ավել՝ անկախ ամեն ինչից, սկսել բնակչության տարահանումը աղետի ազդանշան տալուց հետո:

Ընդունել արտակարգ իրավիճակի «ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» մակարդակը, անմիջապես տեղեկացնել արտակարգ իրավիճակների դիագրամում (գծ. 3.1) նշված համապատասխան մարդկանց: Լուրջ խնդրի առկայության մասին անհրաժեշտ է մատնանշել անվտանգ երևույթները:

Արտակարգ իրավիճակի ավարտից հետո իրականացնել անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ:

Առաջարկվող գործողություններ Սահքեր, ճեղքեր և սելավների դեպքում

Ունենալ շենքեր և շինություններների իրազեկ ճարտարագետ, որը կգնահատի շենքեր և շինությունները և կգնահատի արտակարգ իրավիճակի մակարդակը: Եթե իրազեկ ճարտարագետն անմիջապես հասանելի չէ, անձնակազմը պետք է կազմակերպի շենքեր և շինությունների շրջայց և իրականացնի դրանց վիզուալ զննում՝ մինչև շենքեր և շինություններների իրազեկ ճարտարագետի կողմից զննման իրականացումը:

Օգտագործելով արտակարգ իրավիճակների դիագրամը (գծ. 3.1.), գնահատել արտակարգ իրավիճակի մակարդակը:

Եթե շենքեր և շինությունները վթարվում է կամ լրջորեն վնասված է, ընդունել արտակարգ իրավիճակի «ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» մակարդակը, անմիջապես տեղեկացնել

արտակարգ իրավիճակների դիագրամում (գծ.3.1.) նշված համապատասխան մարդկանց:

Եթե շենքեր և շինությունները չի վթարվում կամ լրջորեն վնասվում, ստուգել խախտումները՝

- շենքեր և շինությունների միջով նոր տեղերից, կամ ուժեղացող հոսք արդեն գոյություն ունեցող հատվածներում.
- ուժեղ հատակային հոսք.
- ճաքեր, սահքեր, նստեցումներ կամ վնասվածքի այլ նշաններ:

Ընդունել արտակարգ իրավիճակի «ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿ» մակարդակը: Տեղեկացնել արտակարգ իրավիճակների դիագրամում նշված համապատասխան մարդկանց:

Եթե շենքեր և շինությունները թեթևակի վնասվել է, սակայն չի թվում այնքան վտանգավոր, որ կարող է պատճառել շենքեր և շինությունների վթար, ապա ընդունել արտակարգ իրավիճակի «ԴԻՏՈՒՄ» մակարդակը: Հետևել և հաղորդել վնասվածքի բնույթի և տեղի մասին, նկարագրել սահքերը, նստեցումները, սելավները, հաղորդել կառուցվածքների և խողովակների վնասվածքների մասին և այլն:

Արտակարգ իրավիճակի ավարտից հետո իրականացնել անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ:

<u>Առաջարկվող գործողություններ ահաբեկչական գործողությունների կամ ռազմական ագրեսիային դեպքում</u>

Ահաբեկչական գործողությունների կամ ռազմական ագրեսիային հետևանքով ստեղծված իրավիճակում հետևել ներքին ռադիոհանգույցի հեռարձակումներին և ղեկավարների ցուցումներին: Եթե սպառնալիքի առբյուրը անհատ է և նույնականացված չէ գործել ըստ վթարային և արտակարգ իրավիճակներում գործելու հրահանգի պահանջներին համապատասխան: Հնարավորության դեպքում կազմակերպված տեղափոխվել ապաստարան, նախապես համոզվել, որ նման գործողություններն անվտանգ են:

Պատասխանատու աշխատակիցների հետ իրականացնել տեխնոլոգիական գործընթացների անվտանգ և անվնաս դադարեցում, կառավարման վահանակներին կողմնակի անձանց մոտեցման ուղիների արգելափակում, բարիկադավորում, էլեկտրասնուցման ընդհատում, կապիտալ շինարարության օբյեկտիի թիրափային հատվածների մուտքերի արգելափակում:

Ստեղծված իրավիճակում հետևել ռադիոհանգուցի հաղորդումներին, մոբիլ կապի օպերատորի հաղորդագրություններին, ղեկավարների հրահանգներին և պահպանել հանգստություն: Եթե բացակայում են հաղորդումները և հաղորդագրություններիը, ապա

փորձեք կապ հաստատել ղեկավարության կամ տեղական ինքնակառավարմամ մարմինների կամ փրկարար ծառայության հետ, այսուհետ գործել ըստ հրահանգների, իսկ դրանց բացակայության պարագայում՝ ըստ ստեղծված իրադրության:

3.2 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Օբյեկտում օգտագործվող (շահագործվող) տեխնիկական սարքերը արտադրվում են այն կազմակերպությունների կողմից, որոնք ունեն անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և որակյալ մասնագետներ՝ նախագծային փաստաթղթերին համապատասխան՝ հաշվի առնելով գիտության և տեխնիկայի ձեռքբերումները և արդյունաբերական անվտանգության պահանջները: Տեխնիկական սարքերի արտադրության ժամանակ վերահսկվում է արտադրված արտադրանքի որակը և իրականացվում է դրանց համապատասխանությունը տեխնիկական փաստաթղթերին, բաղադրիչների և նյութերի մուտքային որակի հսկողություն, ինչպես նաև արտադրված արտադրանքի վերաբերյալ բողոքների գրանցման և վերացման սահմանված ընթացակարգերի պահպանում: Տեխնիկական սարքի տեխնիկական փաստաթղթերում, ներառյալ օտարերկրյա, արտադրողը (մատակարարը) կազմակերպությունը նշում է անվտանգ շահագործման պայմաններն ու պահանջները, այս սարքի և դրա հիմնական բաղադրիչների հսկողության փորձարկումների (ստուգումների) անցկացման մեթոդաբանությունը, ծառայության ժամկետը և սպասարկումը: կյանքը, պահպանման և վերանորոգման և ախտորոշման կարգը:

Մեքենայի կամ սարքավորման արտադրության ընթացքում ապահովվում են տեխնիկական կանոնակարգերին համապատասխան նախագծային փաստաթղթերով սահմանված անվտանգության պահանջները՝ հաշվի առնելով կիրառվող տեխնոլոգիական գործընթացները և կառավարման համակարգերը:

Արտադրողն իրականացնում է մեքենաների և սարքավորումների ռիսկերի գնահատում մինչև դրանք Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ դնելը:

Մեքենայի կամ սարքավորումների արտադրողը մեքենային և սարքավորումներին տրամադրում է շահագործման հրահանգներ:

Գործողությունների ցանկն ուղղված է պահանջներին բավարարելուն.

- արդյունաբերական անվտանգություն;
- ջերմային անվտանգություն;
- էլեկտրական անվտանգություն;
- պայթյունի անվտանգություն;

- հրդեհային անվտանգություն;
- մեխանիկական անվտանգություն;
- ճառագայթային անվտանգություն;
- կառավարման համակարգի անվտանգություն;
- տարածքներ, տեղամասեր.

3.3 ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՀՀՇՆ I-3.01.01-2008 սահմանում է շենքերի և շինությունների, ցանցերի և ինժեներական համակարգերի, ինչպես նաև նախագծային գործընթացների համար անհրաժեշտ նվազագույն պահանջները.

- մեխանիկական անվտանգություն;
- հրդեհային անվտանգություն;
- անվտանգություն բնական վտանգավոր գործընթացների և երևույթների և (կամ) տեխնածին ազդեցությունների ժամանակ.
- անվտանգ կենսապայմաններ մարդու առողջության և շենքերում և շինություններում մնալու համար.
- անվտանգություն շենքերի և շինությունների օգտագործողների համար.
- շենքերի և շինությունների հասանելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց և սահմանափակ շարժունակությամբ բնակչության այլ խմբերի համար.
- շենքերի և շինությունների էներգաարդյունավետություն.
- շրջակա միջավայրի վրա շենքերի և շինությունների ազդեցության անվտանգ մակարդակը:

Նախագծային փաստաթղթերը պետք է օգտագործվեն որպես հիմնական փաստաթուղթ՝ շենքի կամ շինության կյանքի ցիկլի բոլոր հետագա փուլերում շենքի կամ շինության անվտանգության ապահովման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Աղյուսակ 3.1 – Նախագծված շենքերի և շինությունների նույնականացման առանձնահատկությունները

Շինության անվանումը	Շենքերի և շինությունների նույնականացման ցուցանիշները						
	Անվտանգության վրա ազդող ենթակառուցվածքային օբյեկտներին պատկանելիությունը	Օբյեկտի տարածքում տարերային և տեխնածին երևույթների նկարագիրը	Հրդեհային և պայթյունային վտագավորությունը			Մարդկանց մշտական գտնվելու կարիքը	Պատասխանատվության մակարդակը, շինության դասը, հուսալիության գործակիցը, նշանակալիության դասը
			Շինության կատեգորիան	դասը	Կոմպոնենտների դասը		
Արտադրական	Ոչ	Դիտարկված չէ	Դ	Ф5.1	С0,	ԱՅՈ	Մակարդակը-նորմալ Շինության դասը-КС-2 Հուսալիության գործակիցը-1,0 Նշանակալիության դասը-2
Գրասենյակ	Ոչ	Դիտարկված չէ	Դ	Ф5.1	С0,	ԱՅՈ	Մակարդակը-նորմալ Շինության դասը-КС-2 Հուսալիության գործակիցը-1,0 Նշանակալիության դասը-2

4. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության սկզբունքներն են՝

- մարդկանց կյանքի և առողջության ապահովման գերակայությունը.
- աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության ոլորտի տեղեկատվության հրապարակայնությունը, թափանցիկությունը, դրանց ազատ տիրապետումը, տարածումը և հետադարձ կապի ապահովումը.
- բնակչության առավել խոցելի խմբերի պաշտպանության առաջնահերթությունը.
- աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության ոլորտում հավասարության ապահովումը.
- աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության, և ուղղությամբ՝ ապահովելով առաջնահերթ և օրակարգային խնդիրներին ժամանակին և արդյունավետ անդրադառնումը.
- պետության, համայնքի, կազմակերպության բնականոն գործունեության և զարգացման գործընթացներում աղետների ռիսկի կառավարման միջոցառումների ներառման գիտակցումը և նոր ռիսկերի առաջացման հնարավորության բացառումը.
- աղետների ռիսկի կառավարմանն ուղղված միջոցառումներին համալիր մոտեցման ցուցաբերումը.
- տեխնածին վթարների առաջացումը և տեխնոլոգիական երևույթներով պայմանավորված աղետների ռիսկը բացառելու նպատակով միայն ստուգված և տեխնիկական անվտանգություն ապահովող փորձարկված միջոցների և միջոցառումների կիրառումը.
- բնակչության կամավոր հիմունքներով ներգրավվածությունն արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներին։

Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության նպատակներն են՝

- ապահովել անհատի, պետության, համայնքի և հասարակության անվտանգության և դիմակայունության մակարդակի բարձրացումն ու երկրի կայուն զարգացումը.
- հզորացնել աղետների ռիսկի գիտակցմամբ պայմանավորված, ինտեգրված և միասնական տնտեսական, կառուցվածքային, իրավական, սոցիալական, առողջապահական, մշակութային, կրթական, բնապահպանական, տեխնոլոգիական և քաղաքական կառավարման համակարգերի կարողությունները.
- աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության համակարգի սուբյեկտների միջև հարաբերությունների կարգավորում, ինչպես նաև նրանց

իրավունքների, պարտականությունների և պատասխանատվությունների սահմանում:

4.1. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

Արտակարգ իրավիճակ հայտարարվում է ՀՀ ամբողջ տարածքում կամ դրա առանձին տարածքներում՝ հանրապետական, մարզային կամ համայնքային մակարդակի արտակարգ իրավիճակի առաջացման կամ դրա անմիջական սպառնալիքի առկայության դեպքերում:

Արտակարգ իրավիճակ կարող է հայտարարել՝

1) ՀՀ կառավարությունը՝ հանրապետական և մարզային մակարդակի արտակարգ իրավիճակների պարագայում՝

- լիազոր մարմնի ղեկավարի առաջարկությամբ,
- ՀՀ տարածքային կառավարման մարմնի ղեկավարի առաջարկությամբ,
- համայնքի ղեկավարի առաջարկությամբ.

2) համայնքի ղեկավարը՝ համայնքային կամ տեղային (օբյեկտային) մակարդակի արտակարգ իրավիճակների պարագայում՝

- լիազոր մարմնի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի առաջարկությամբ,
- ՀՀ տարածքային կառավարման մարմնի ղեկավարի առաջարկությամբ,
- համայնքի վարչական տարածքի (շրջանի) ղեկավարի առաջարկությամբ,
- համայնքի տարածքում գործող կարևորագույն նշանակության օբյեկտի, կազմակերպության ղեկավարի կամ հերթապահի (օպերատիվ հերթապահի, կարգավարի, ավագ կարգավարի) զեկույցի հիման վրա:

ՀՀ կառավարությունը կամ համայնքի ղեկավարը հայտարարում է արտակարգ իրավիճակ, ձեռնարկում է իրավիճակից բխող միջոցառումներ:

Համայնքի ղեկավարի որոշմամբ արտակարգ իրավիճակ հայտարարվելու դեպքում համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ անհապաղ գումարվում է համայնքի ավագանու արտահերթ նիստ:

Արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին ՀՀ կառավարության կամ համայնքի ղեկավարի որոշումը, ինչպես նաև որոշման մեջ կատարվող փոփոխությունները և լրացումներն անհապաղ հրապարակվում են հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով, իսկ եթե դա հնարավոր չէ՝ զանգվածային լրատվության այլ միջոցներով:

ՀՀ կառավարության, ինչպես նաև համայնքի ղեկավարի արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, եթե այդ որոշմամբ ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ:

Արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին որոշումը պետք է ներառի՝

- հայտարարելու անհրաժեշտության հիմնավորումը.
- արտակարգ իրավիճակի հետևանքով տուժած տարածքները.
- արտակարգ իրավիճակներին արձագանքման ուժերն ու միջոցները.
- միջազգային հումանիտար աջակցության ուղղություններն ու ծավալները (աղետի դեպքում).
- ուժի մեջ մտնելու և գործողության ժամկետները:

Արտակարգ իրավիճակի գործողության դադարումը

Եթե արտակարգ իրավիճակ հայտարարելու համար հիմք ծառայած հանգամանքները վերացել են մինչև արտակարգ իրավիճակի գործողության ժամկետի ավարտը, ապա արտակարգ իրավիճակը դադարեցվում է համապատասխանաբար ՀՀ կառավարության կամ համայնքի ղեկավարի որոշմամբ, որը ենթակա է անհապաղ հրապարակման հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա զանգվածային լրատվության այլ միջոցներով: ՀՀ կառավարության, ինչպես նաև համայնքի ղեկավարի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Համայնքի ավագանին կարող է սահմանված կարգով վերացնել համայնքի ղեկավարի որոշմամբ հայտարարված արտակարգ իրավիճակը կամ չեղյալ հայտարարել արտակարգ իրավիճակում նախատեսված միջոցառումների իրականացումը:

4.2. ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Արտակարգ և վթարային իրավիճակներ հնարավոր է առաջանալ՝

- մարդու գործունեության հետևանքով,
- բնական անցանկալի երևույթների հետևանքով:

Արտակարգ կամ վթարային իրավիճակների հետևանքների կանխագուշակման մաթեմատիկական մոդելի հիմքում ընկած է երկու պրոցեսների պատճառահետևանքային կապը՝

- Խոցման գործոնների ազդեցությունը օբյեկտի վրա :
- Օբյեկտի հակազդումը տվյալ խոցման գործոնին:

Նշված երկու պրոցեսները կրում են վառ արտահայտված պատահական բնույթ: Այսինքն, խոցման գործոնները, որոնց համար հնարավոր չեն կանխագուշակել առաջացման և ի հայտ գալու պայմանները, ինտենսիվությունը տվյալ տարածքի և օբյեկտի համարÿ իր բոլոր բնութագրերով, խոցման տարբեր հավանականությամբ, կարող են ունենալ ոչ համարժեք ազդեցություն: Բացի դրանից, շենքի վրա նույնացված

բեռնվածության ազդեցության դեպքում գոյություն կունենա դրանց քանդման, քայաքայման որոշակի հավանականություն: Շենքերի քանդման հավանականության վրա ազդում են նյութերի ամրության խզումը, շինարարական կոնստրուկցիայի չափերը, դրանց պատրաստման տեխնոլոգիան և այլ գործոններ:

Աղյուսակ 4.1.

Խոցման գերծոնները և հիմնական բնութագրերը

Արտակարգ իրավիճակի տեսակը	Խոցման գործոնները	Պարամետրերը
Երկրաշարժ	շենքերի, շինությունների բեկորներ	երկրաշարժի ինտենսիվությունը
Պայթյուն	հարվածային ալիք	օդային հարվածային ալիքի ճակատում ավելցուկային ճնշումը
Հրդեհ	ջերմային ճառագայթում	ջերմային հոսքի խտությունը, հրդեհի տևողությունը
Ցունամի, հիդրոտեխնիկական վթարներ	ցունամիի ալիք, ճեղքման ալիք	ալիքի բարձրությունը, առավելագույն արագությունը, հիդրավլիկական հոսքի ճնշումը, ջրառողովման տարածքը և տևողությունը
Ռադիացիոն վթար	ռադիոակտիվ վարակում	ճառագայթէման դոզան, ճառագայթման դոզայի հզորությունը
Քիմիական վթար	տոկսիկ բեռնվածություններ	սահմանային թույլատրելի կոնցետրացիան, տոկսիդոզան

Մարդկանց խոցման հավանականությունը կախված է ինչպես առաջնային գործոններից, այնպես էլ մի շարք պատահական այլ պատահարներից, մասնավորապես, ռիսկի գոտում մարդկանց հայտնվելու, գտնվելու հավանականությունից, ազգաբնակչության խտությունից և երկրորդային էֆֆեկտի (բեկորներ, պայթյուններ և այլն) խոցման արգասիքների ազդեցության հավանականությունից:



Տարերային և տեխնածին անցանկալի երևույթների իրացման պայմանները կառավարվում ու բացառվում են հետևյալով՝

- Սեյսմակայուն շինարարության իրականացումով:
- Սողանքավտանգ հատվածներում պաշտպանական կառույցների իրականացումով:
- Ափապաշտպան կառույցների իրականացումով:
- Տեխնոլոգիական գործընթացների կառավարման անտոմատացված համակարգերի կիրառումով:
- Սարքավորումների պարբերական տեխնիկական սպասարկման իրականացումով:
- Անձնակազմի պարբերական ուսուցումով և վերապատրաստումով:
- Արտակարգ և վթարային իրավիճակներում գործողությունների թեմաներով անձնակազմի պարբերական հրահանգավորումով:

Արտակարգ ու վթարային իրավիճակների հետևանքների մեղմման նպատակով իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

- Տեղամասի ՔՊ և ԱԻ պլանները մշակել և կապիտալ շինարարության օբյեկտիի ընդհանուր քաղաքականությանը համապատասխան և ինտեգրել գործողությունների ընթացակարգերում:
- Սեփական վթարափրկարարական խմբի ստեղծում և պատրաստավածության համապատասխան աստիճանի բերում ու մարտունակ վիճակի պահպանում:
- Վթարավերականգնողական աշխատանքների արդունավետության և օպերատիվության մակարդակի բարձրացման նպատակով անհրաժեշտ նյութա-տեխնիկական պաշարի ստեղծում և պահպանում:
- Ճանապարհների, անցումների և մոտոցումների ազատ պահելը:
- Ազդարարաման, ահազանգման համակարգերի պարբերական փորձարկումները և գործունակ վիճակում պահելը:
- Արտակարգ և վթարային իրավիճակների արձագանքման և գործողությունների պլանի պարբերական թարմացումն, ըստ անվտանգության ռիկերի, օրեսդրական պահանջների փափախությունների:
- Քաղաքացիական պաշտպանության պլանի պարբերական թարմացումն, ըստ անվտանգության ռիկերի, օրենսդրական պահանջների փափախությունների:
- Ազդակիր համայնքներում ազդարարաման համակարգերի տեղադրում, փորձաարկում և գործունակ վիճակում պահում:
- Բնակչության շրջանում ուսումնական վարժանքների պարբերական իրականացում:

4.3. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄԸ

Արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման համար ներգրավված արձագանքման ուժերից ու միջոցներից ելնելով, ՀՀ տարածքում սահմանվում են արտակարգ իրավիճակներին արձագանքման կառավարման հետևյալ մակարդակները՝

- Հանրապետական:
- Մարզային:
- Համայնքային:
- Տեղային (օբյեկտային):

Արտակարգ իրավիճակներին արձագանքման կառավարման մարմիններն են՝

1) հանրապետական մակարդակում՝
- ՀՀ փոխվարչապետը:
- արտակարգ իրավիճակների կառավարման հանրապետական հանձնաժողովը.
- արտակարգ իրավիճակներին արձագանքման պետական կառավարման համակարգի մարմնի հանձնաժողով:

2) մարզային մակարդակում՝
- արտակարգ իրավիճակների կառավարման մարզային հանձնաժողովը;
- տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ղեկավարները:

3) համայնքային մակարդակում՝
- արտակարգ իրավիճակների կառավարման համայնքային հանձնաժողովը;
- տարածքային ստորաբաժանումների, վարչական տարածքների, կազմակերպությունների ղեկավարները:

4) տեղային (օբյեկտային) մակարդակում՝
- արտակարգ իրավիճակների կառավարման օբյեկտային հանձնաժողով
- օբյեկտի ղեկավար կազմը:

Արտակարգ իրավիճակներին արձագանքումն իրականացնում են արձագանքման ուժերը՝ օգտագործելով իրենց ունեցած նյութական պաշարները և միջոցները:

Արտակարգ իրավիճակների կառավարման համայնքային հանձնաժողովի գործունեությունը ղեկավարում է համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված պաշտոնատար անձը:

Արտակարգ իրավիճակների կառավարման օբյեկտային հանձնաժողովի գործունեությունը ղեկավարում է օբյեկտի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը:

Արտակարգ դեպքի, պատահարի վայրում արձագանքումն անմիջականորեն ղեկավարում է առաջինը ժամանած պետական կառավարման համակարգի մարմինների արձագանքման ուժերի լիազոր պաշտոնատար անձը, հաշվի առնելով արտակարգ դեպքի առաջացման պատճառի բնույթը, մինչև սահմանված ղեկավարների ժամանումը:

Տեղամասային պլանի արտակարգ իրավիճակների ընթացակարգը բերված է գծապատկեր 4.1-ում:



Գծապատկեր 4.1. Տեղամասային պլանի ընթացակարգը:

Եթե դաշտային պայմաններում ստեղծվել է գործողությունների ղեկավարման շտաբ, ապա արձագանքման ուժերը, անկախ իրենց ենթակայությունից, արտակարգ իրավիճակի կամ աղետի գոտի ժամանելուն պես անցնում են գործողությունների ղեկավարման շտաբի ենթակայության ներքո:

Արտակարգ իրավիճակի կամ աղետի գոտում արտակարգ իրավիճակին արձագանքման ղեկավարը պատասխանատու է պետական կառավարման համակարգի մարմինների արձագանքման ուժերի և արտակարգ իրավիճակների արձագանքման այլ մասնակիցների անվտանգության համար:

ՀՀ վարչապետը, լիազոր մարմնի առաջարկությամբ, կայացնում է որոշում՝ ՀՀ զինված ուժերի և այլ զորքերի համապատասխան ստորաբաժանումներին ներգրավել արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներին:

Արտակարգ իրավիճակների արձագանքման կազմակերպումը և ղեկավարումն իրականացվում է համաձայն արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն ուղղված գործողությունների պլանների, միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի, փոխգործողությունների պլանների և այլ պլանավորման փաստաթղթերի:

Գործողությունների պլանի մշակմանը օգնելու համար տեղեկատվությունը ներառում է՝

- Հիմնական կոնտակտներ.
- Շենքեր և շինությունների և ազդակիր տարածքը ընդհանուր սխեման.
- Վնասման գոտիների քարտեզներ.
- Շենքերի, շինությունների գծագրեր.
- Միջոցառումներ և այլ սարքավորումներ:

5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Քաղաքացիական պաշտպանության միջոցառումները բաժանվում են նախապատրաստական և հիմնական միջոցառումների:

Քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական միջոցառումներն իրականացվում են նախապես:

Քաղաքացիական պաշտպանության հիմնական միջոցառումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում:

Քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական միջոցառումներն են՝

- քաղաքացիական պաշտպանության օբյեկտային ուժերի համալրումը, պատրաստումը և մշտական պատրաստվածության ապահովումը.
- շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, տրանսպորտային հաղորդակցության ուղիների և մայրուղիների շինարարության անվտանգության ու հուսալիության ապահովումը. վտանգավոր օբյեկտների անվտանգ գործունեության ապահովումը.
- կառավարման, կապի ու ազդարարման համակարգերի հիմնումը և դրանց բնականոն գործունեության ապահովումը.
- պետական, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ բնակչության ուսուցումը.
- կառավարման մարմինների և բնակչության իրազեկման ապահովման համակարգի հիմնումը.
- պաշտպանական կառույցների շինարարությունը և պահպանումը.
- անհատական պաշտպանության միջոցների ու քաղաքացիական պաշտպանության նպատակով այլ գույքի անհրաժեշտ պաշարների կուտակումը և պահպանումը.
- բժշկական ու նյութատեխնիկական անհրաժեշտ պաշարների ստեղծումը և պահպանումը.
- քաղաքացիական պաշտպանության պլանների մշակումը:

Նշված միջոցառումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Քաղաքացիական պաշտպանության հիմնական միջոցառումներն են՝

- կառավարման մարմինների և բնակչության ազդարարումը.
- տարահանումը և տեղաբաշխումը.

- պատսպարումը.
- քողարկումը.
- փրկարարական աշխատանքների իրականացումը.
- բժշկական ապահովումը.
- հակահրդեհային ապահովումը.
- վտանգավոր տարածքների բացահայտումը, վնասազերծումն ու վարակազերծումը ճառագայթային, քիմիական և մանրէաբանական միջոցներից.
- օբյեկտի կենսագործունեության ապահովումը.
- շրջակա միջավայրի, ջրի, սննդամթերքի վիճակի ու վարակվածության դիտարկման և հսկողության մշտական իրականացման ուժեղացումը.
- կառավարման մարմինների և բնակչության իրազեկման ապահովումը.
- անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարումը.
- հասարակական կարգի ապահովումը, ինչպես նաև հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանման ուժեղացումը.
- նյութատեխնիկական պաշարների, տրանսպորտային և այլ միջոցների նպատակային օգտագործման ապահովումը.
- փրկարարական աշխատանքների կազմակերպման ու իրականացման համար կապի հանրապետական, գերատեսչական և տեղական ցանցերի առաջնահերթ օգտագործումը:

Նշված միջոցառումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Բնակչության պաշտպանության կանխարգելիչ միջոցառումներն են՝

- շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, տրանսպորտային հաղորդակցության ուղիների և մայրուղիների շինարարությունը՝ անվտանգության և հուսալիության անհրաժեշտ մակարդակներով.
- վտանգավոր օբյեկտների անվթար գործունեության ապահովումը.
- շրջակա բնական միջավայրի, տարածքների և օբյեկտների՝ ճառագայթային, քիմիական և մանրէաբանական վարակվածության դիտարկման և հսկողության կազմակերպումը.
- բնակչության ուսուցման կազմակերպումը:

Բնակչության պաշտպանության կանխարգելիչ միջոցառումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հիմնական միջոցառումներն են՝

- արտակարգ իրավիճակների սպառնալիքի կամ առաջացման մասին պետական մարմիններին և բնակչությանն ազդարարումը.
- աղետի գոտում բնակչության պատսպարման, տարահանման և անհատական պաշտպանության միջոցներով ապահովման կազմակերպումն ու իրականացումը.
- աղետի գոտում փրկարարական և այլ անհետաձգելի վթարային վերականգնողական աշխատանքների կատարումը.
- աղետի գոտում հասարակական կարգի, ինչպես նաև պաշտպանական նշանակության, բնակչության կենսագործունեությունն ապահովող և այլ կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացումը.
- աղետի գոտում բնակչության կենսաապահովման միջոցառումների իրականացումը.
- աղետի գոտում քաղաքացիների, տրանսպորտային միջոցների տեղաշարժման, բեռների ներմուծման և արտահանման կանոնակարգումը.
- պետական մարմինների գույքի, նյութատեխնիկական պաշարների, տրանսպորտային և այլ միջոցների նպատակային հավաքումն ու օգտագործումը.

- փրկարարական աշխատանքների կազմակերպման և իրականացման համար կապի հանրապետական, գերատեսչական ու տեղական ցանցերի առաջնահերթ օգտագործումը.
- աղետի գոտում կարանտինային և այլ սանիտարահակահամաճարակային միջոցառումների իրականացումը.
- աղետի գոտում արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասի գնահատումը.
- բնակչության պաշտպանության ապահովման աշխատանքների կատարման նպատակով աշխատունակ քաղաքացիների (նրանց համաձայնությամբ) ներգրավումն արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անհատական հատկանիշների:

Նախատեսված միջոցառումներ իրականացնելու նպատակով, անհրաժեշտության դեպքում, Հայաստանի Հանրապետության կառավարությունն աղետի գոտում կարող է ստեղծել կառավարման հատուկ մարմիններ:

7. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ և ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՏԱՐԱՀԱՆՈՒՄԸ

7.1. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

Տարահանումը, բնակչության և աշխատակիցների կոլեկտիվ պաշտպանության հիմնական ձևերից մեկն է: Այն իրականացվում է վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ մարդկանց ժամանակավոր տեղափոխման և տեղաբաշխման միջոցով (նկ.7.1):

Տարահանումն իրականացվում է այնպիսի իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում (բնակավայրերում, օբյեկտներում) կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ:



Նկ.7.1. Բնակչության տարահանման ուրվագիծ

Այդպիսի իրավիճակներ հաճախ առաջանում են տարերային աղետների և տեխնածին լայնամասշտաբ վթարների ու ռազմական գործողությունների արդյունքում:

Տարահանված բնակչության և աշխատակիցների համար օգտագործվում են դպրոցները, ակումբները, հյուրանոցները, հանրակացարանները, բնակելի տները (անկախ

սեփականության ձևից), որպես ժամանակավոր կացարաններ, որոնց տրամադրումը իրականացվում է հետագա համարժեք փոխհատուցմամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայն ներկայացված գծապատկերի, բնակչությունը կարող է տարահանվել հետիոտն կարգով (խմբերով) կամ տրանսպորտային միջոցներով՝ ավտոշարասյուններով, երկաթուղային շարժակազմերով և ջրային տրանսպորտով:

Առանձին դեպքերում տարահանման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են տրամադրվել նաև օդային տրանսպորտային միջոցներ: Տարահանման համար տրամադրվող տրանսպորտային միջոցների կիրառումն ու վառելիքաքսուքային նյութերով ապահովումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից սահմանած կարգով:

Տարահանման մասին որոշում ընդունում է ՀՀ կառավարությունը, պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության սահմաններում: Տարահանման մասին որոշում ընդունող պաշտոնատար անձը նշում է տարահանման ժամկետները, (սկիզբը, ավարտը), ձևը (հետիոտն շարասյուներով, տրանսպորտային միջոցներով) (նկ.10.2) և իրականացնում է բնակչության տարահանումը և տարահանված բնակչության ընդունումը և տեղաբաշխումը: Այդ միջոցառումները կանոնակարգվում են համապատասխան տարահանման հանձնաժողովների կողմից նախապես մշակված պլաններով:



Նկ.7.2. Բնակչության և աշխատակիցների տարահանման ձևերը

Բնակչության տարահանումը սկսվում է տարահանման հավաքակայաններից, որտեղ տարահանման ազդանշան (հրահանգ) ստանալու դեպքում ժամանում են տարահանվողները:

Յուրաքանչյուր տարահանվող պարտավոր է՝

- Ունենալ անձը հաստատող փաստաթուղթ, երեք օրվա չոր սննդի պաշար, հիգիենայի առաջնային և այլ անհրաժեշտ պարագաներ:
- Հոսանքազրկել բնակարանը/աշխատատեղը և անվտանգ տեղեր փոխադրել հրդեհավտանգ, թունավոր ու պայթունավտանգ նյութերը և առարկաները:
- Տարահանման և ընդունման հավաքակայաններում, երթի ընթացքում կատարել հավաքակայանների և շարասյան պետերի հրահանգները:

Ընդհանուր կամ մասնակի տարահանման դեպքում տարահանվողների տեղափոխումն իրականացվում է անչափահասների, հիվանդների և հաշմանդամների առաջնահերթության սկզբունքով:

Հիվանդների, բժշկական հիմնարկների (հիվանդանոցների) բուժանձնակազմի տարահանումն իրականացվում է տեղերից՝ այդ նպատակով նախապես տրամադրված համապատասխան փոխադրամիջոցներով, շրջանցելով տարահանման հավաքակայանները, որտեղ ներկայացվում է տարահանվողների ցուցակը և ճշգրտվում են երթուղիները:

Տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովումն իրականացվում է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և մարզպետարանների համապատասխան ծառայությունների միջոցով՝ համաձայն ՀՀ ՆԳՆ ՓԾ և նրա կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացրած հայտի:

Բնակչության տարահանման համար օգտագործվում են մարդատար ավտոմեքենաներ (ավտոբուսներ, թեթև մարդատար ավտոմեքենաներ), անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել նաև թափքավոր և ինքնաթափ բեռնատար ավտոմեքենաներ ու ավտոկցորդներ, որոնք նախապես պետք է հարմարեցնել մարդկանց փոխադրելու համար: Տարահանումն իրականացնող տրանսպորտային միջոցներն ապահովվում են ՀՀ ոստիկանության կողմից տրված անցագրերով: Նրա ստորաբաժանումները իրականացնում են տարահանման երթուղիների անցողունակության և տարահանված բնակավայրերում (տարածքներում) ու օբյեկտներում մնացած գույքի պահպանության միջոցառումները:

Զինվորական փոխադրումներում ներգրավված տրանսպորտային միջոցները, որպես կանոն, չեն օգտագործվում բնակչությանը տարահանելու համար (բացառությամբ անխուսափելի դեպքերի):

Տարահանման և բնակչության ընդունման հավաքակայաններում, ժամանակավոր

կացարաններում, տարահանման երթուղիներում տարահանվողների բուժօգնության միջոցառումներն իրականացվում են տարահանված բժշկական հիմնարկների, ՀՀ հանրապետական և մարզային առողջապահական համապատասխան ծառայությունների կողմից, սեփական միջոցների հաշվին՝ ՀՀ պետական բյուջեից հետագա համարժեք փոխհատուցմամբ՝ սահմանած կարգով:

7.2. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Այս փուլի նպատակն է՝ ցույց տալ շենքեր և շինությունների վթարի դեպքում վտանգված աշխատակիցների հավանական թիվը, ինչպես նաև տարահանման համար մատչելի ժամանակը:

Կապիտալ շինարարության օբեկտին պետք է տրամադրվի կոնկրետ «Տագնապի պլան», որը գործի կդրվի արտակարգի իրավիճակի «Պատրաստվածության վիճակ» մակարդակի դեպքում: Բացի այդ, յուրաքանչյուր տարի պետք է իրականացվի փորձնական տարահանում:

Հաջորդ աղյուսակը ցույց է տալիս վտանգված տարածքները և բնակչության թիվը, հեռավորությունը մինչև ապահով ապաստան և ուղղությունը, որով բնակչությունը պետք է շարժվի կյանքը փրկելու համար:

Հանաձայն գլխավոր հատակագծի, օբյեկտից ամենամոտ շենքները և շինությունները գնտվում են 120 մետր և ավելի հեռավորության վրա, որը հանաձայն գնահատված ռիսկերի քարտեզի, գտնվում են վնասակարության և հազվադեպ պատահող մերժի սահմանին:

Աղյուսակ 7.1 Անվտանգ և անվնաս տարածք հասնելու/հեռանալու ուղղություններն ու ժամանակահատվածները

Տեղամասի անվանումը	Աշխատակիցների քանակը	Վտանգված մարդկանց հնարավոր թիվը	Հեռանալու համար անվտանգ ժամանակը	**Անվտանգ և անվնաս տարածք հասնելու/հեռանալու ուղղությունը**
Գրասենյակային	16	6	3 րոպե	Շինության ընդհանուր երկարությունը 31 մ է, ելքերի քանակը 1, մինչև ժամանակավոր հավաքման կետ հեռավորությունը 90մ, օբյեկտիի տարածքից դուրս գալու ամենակարճ հեռավորությունը դեպի հարավ ուղղությունն է՝ 90 մ, իսկ դեպի հարավ մոտ 110մ հեռավորության վրա անվտանգ և անվնաս տարածք է բնակավայրի սահմաններում:

Արտադրական	20	6	3 րոպե	Շինության ընդհանուր երկարությունը 31 մ է, ելքերի քանակը 1, մինչև ժամանակավոր հավաքման կետ հեռավորությունը 90մ, օբյեկտիի տարածքից դուրս գալու ամենակարճ հեռավորությունը դեպի հարավ ուղղությունն է՝ 90 մ, իսկ դեպի հարավ մոտ 110մ հեռավորության վրա անվտանգ և անվնաս տարածք է բնակավայրի սահմաններում:









Նկար 7.1. ՀՀ ՆԳՆ ՓՋ-ների տեղակայման վայրերը և մոտեցման ճանապարհները

Ինչպես երևում է բերված գծապատկերներից, փրկարար ուժերի մոտեցման անենակարճ տևողությունը 5 րոպե է Երևան Աճառյան 44 հասցեից: Ընդհանուր առումով, փրկարար ուժերը կարող են մոտենալ նաև Աբովյան քաղաքից, անհրաժեշտության դեպքում հանրապետության այլ բնակավայրերից:



Նկար 7.2. Վերակառուցվող շինությանը փրկարարական տեխնիկայի մոտեցման ուղիները

Հակահրդեհային ծառայության աշխատակիցները, օրենսդրությամբ սահմանված կարգով, պատասխանատվություն են կրում հրդեհաշիջման ժամանակ թույլ տրված սխալների, ինչպես նաև իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Օբյեկտերին արտակարգ, վթարային և հրդեհի դեպքերում փրկարարական տեխնիկայի մոտեցումներն ապահովվում է Վերակառուցվող ձեռնարության գլխավոր հատակագծով սահմանված ներտնտեսային ճանապարհներով և անցուղիներով (ըստ ՀՀ Կառավարություն 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջների), որոնց թողունակությանն ապահովվում է շենքերի և շինությունների միջև հակահրդեհային տարածություններով:

7.3. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՋԱՐԱՐՈՒՄԸ

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի համար պատասխանատու մարմինը՝ ներգրավելով զանգվածային լրատվամիջոցներին, իրականացնում է՝

- բնակչության վարքի կանոնների մասին ուսուցանումն ու իրազեկումը,
- փրկարարական աշխատանքների ընթացքի և աղետի հետևանքների վերացման վերաբերյալ հաղորդումների հեռարձակումը:

Տեղեկատվական ապահովումը ներառում է՝

- Հանրային իրազեկմանն ուղղված գործընթացներն ապահովում է Միջգերատեսչական միացյալ լրատվական կենտրոնը (ՄՄԼԿ), որն աղետի դեպքում կազմակերպվող խումբ է, շահագրգիռ բոլոր գերատեսչությունների և կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավումով: ՄՄԼԿ-ն գործում է որպես միջանկյալ օղակ պետական, տեղական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության միջև, հետևում է իրադարձությունների ընթացքին, անընդհատ կապի մեջ է ՀՀ ՆԳՆ ՓԾ ՃԿԱԿ-ի և հետևանքների վերացման գործում ներգրավված մարմինների հետ:
- Հրատապ հաղորդագրության դեպքում կազմվում է բնակչության վարքականոնների մասին հաղորդագրություն, որը փոխանցվում է բջջային կապի օպերատորներին և մարզային (տարածքային) կապի հանգույցներին՝ բաժանորդներին SMS հաղորդագրություններ ուղարկելու համար: Այս հաղորդագրությունները տրվում են նաև տեղական հեռուստատեսային հեռարձակման հանգույցներով: Անհրաժեշտության դեպքում ՀՀ Հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով «Հատուկ թողարկում» խորագրի ներքո պարբերաբար հեռարձակվում է տեղեկատվություն բնակչության վարքականոնների, իրավիճակի, հետագա հնարավոր զարգացումների և իրականացվելիք միջոցառումների մասին:
- ՄՄԼԿ-ն պարբերաբար կազմակերպում է աղետի ընթացքը լուսաբանող մամուլի ասուլիս՝ շահագրգիռ պետական կառավարման մարմինների, կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչպես նաև հարցազրույցներ բնակչության պաշտպանության բնագավառի լիազոր մարմնի մամլո խոսնակի, պաշտոնյաների հետ: ԶԼՄ-ներին ապահովում անհրաժեշտ տեղեկատվությամբ, պատասխանում հասարակության հարցերին, ամփոփում և բնակչությանը տեղեկատվություն ներկայացնում կառավարման մարմինների գնահատականների, որոշումների ու ձեռնարկվող քայլերի մասին, հետևում արտաքին աղբյուրներից ներթափանցող տեղեկատվությանը, կազմակերպում է ԶԼՄ-ների ներկայացուցիչների տեղափոխումը, համակարգում պատերազմի գոտում ճեպազրույցների կազմակերպման աշխատանքները:
- ՄՄԼԿ-ն իրականացնում է շուրջօրյա օպերատիվ աշխատանք՝ համակարգելով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների,

կազմակերպությունների կողմից ստացված օպերատիվ տեղեկատվության ճշգրտման, մշակման, ամփոփման ու լրատվամիջոցներին պարբերաբար տրամադրելու գործընթաց:

Բնակչության և աշխատակիցների նախազգուշացման համար կիրառվում է հետևյալ ազդարարման «Ուշադրություն բոլորին» ազդանշանը: Ազդարարման ազդանշանը տրվում է արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի ավարտի դեպքերում:

Ազդանշանների հայտարարման ժամանակ

Ազդանշանների անվանումը	Հաղորդման ձևը	Գործողությունները
«Ուշադրություն բոլորին»	Էլեկտրաշչակների միջոցով՝ անընդհատ (չընդհատվող) ձայնային ազդանշան (2-3 րոպե տևո-ղությամբ), միաժամանակ՝ հեռուստատեսությամբ, ռադիոհեռարձակմամբ, բարձրախոսներով տրվում է «Ուշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին» ձայնային հաղորդագրություն	Միացնել ռադիոն, հեռուստացույցը՝ հատուկ հաղորդագրություններ լսելու համար, հետևել պաշտոնական հաղորդագրություններին, գործել համաձայն հաղորդվող հրահանգների
	«Ուշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին»: Աղետալի ջրածածկման վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին, …տներին, …. կազմակերպություններին	Անհրաժեշտ է վերցնել առաջին անհրաժեշտության դեղամիջոցներն ու անձը հաստատող փաստաթղթերը, անհրաժեշտ իրերն ու որոշակի քանակությամբ սննդամթերք և ջուր, անջատել գազամատակարումն ու էլեկտրասնուցումը, փակել ջրի ծորակները և հետևել դեպի բարձրադիր անվտանգ տարածք:
	«Ուշադրություն բոլորին, ուշադրություն բոլորին», «Օդային տագնապի ավարտ»	Համապատասխան պատասխանատուների թույլտվությամբ, դուրս գալ թաքստոցներից և անցնել առօրյա գործունեության:

8. ՕԲՅԵԿՏԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ, ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՄ ԱՅԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏևԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ.

Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների ազդանշաններ ստանալու և փոխանցելու, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության գործունեության մասին օբյեկտի անձնակազմին ծանուցելու համար կօգտագործվեն օպերատիվ տեխնոլոգիական հաղորդակցությունները։

- ավտոմատ հեռախոսային կապ (ATS);
- Ավտոմատ ռադիոհեռախոսային հաղորդակցություն արտակարգ իրավիճակների արձագանքման խմբերի, արտադրական և կարգավարական հաղորդակցություններ շարժական և ստացիոնար կապի սարքավորումների միջոցով։



Գծապատկեր 8.1. Ազդարարման կառուցվածքն ըստ ՔՊ ազդանշանի

Օդային (հրթիռային և ավիացիոն) վտանգի մասին ազդարարաումն իրականացվում է ՀՀ ՆԳՆ մարզային ՓԾ և ճգնաժամային կառավարման մարզային կենտրոնի կողմից հանրային նախազգուշացման համակարգով՝ ուղարկելով «Ուշադրություն բոլորին» ազդանշանը, միացնելով էլեկտրական ազդանշանները և փոխանցելով ձայնային հաղորդագրություն օդային հարձակման նախազգուշացումով:

Ստանալով քաղաքացիական պաշտպանության «Ուշադրություն բոլորին» ազդանշանը՝ օբյեկտի հերթապահը պարտավոր է միացնել հեռուստացույցը կամ լարել ռադիոն տեղական ալիքին՝ լսելու արտակարգ հաղորդագրության բովանդակությունը: Լսելով արտակարգ հաղորդագրությունը, դիսպետչերը պարտավոր է անհապաղ հայտնել դրա մասին ղեկավարությանը, անձնակազմին հաղորդել ազդանշանը և ազդանշանին արձագանքելու կարգը բարձրախոսով:

8.1. ԼՈՒՍԱՅԻՆ և ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ՔՈՂԱՐԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Համաձայն ԳOUS Ռ 55201-2012 3.15 կետի «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների ցանկի մշակման կարգը, բնական և տեխնածին արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված միջոցառումները կապիտալ շինարարական նախագծերի նախագծման ժամանակ» նախագծված օբյեկտի տարածքը չի մտնում լուսաքողարկվող օբյեկտների ցանկում:

Վթարային վերականգնման աշխատանքների ժամանակ լուսային քողարկումն իրականացվում է երկու ռեժիմով՝ մասնակի և ամբողջական:

Այս ռեժիմներում հոսանքազրկման իրականացումն ապահովելու համար նախապատրաստական միջոցառումները պետք է իրականացվեն նախապես՝ խաղաղ պայմաններում:

Տեղամասերում ապահովված են լուսավորության հետևյալ տեսակները՝ աշխատանքային ներքին, վերանորոգման շարժական, վթարային ներքին, տարածքի արտաքին լուսավորություն: Աշխատանքային և վթարային լուսավորության ցանցերի լարումը 220 Վ է: Վերանորոգման լուսավորության համար էլեկտրամատակարարումն իրականացվում է 220V/12V լարման մեկուսացման տրանսֆորմատորի միջոցով:

Նաև վթարային լուսավորության համար նախագիծը նախատեսում է SGV տիպի մարտկոցներով շարժական պայթյունակայուն լամպ:

Վթարային լուսավորության լուսատուներն ունեն աշխատանքային լուսավորության լուսատուներից տարբերվող նշան և ըստ անհրաժեշտության տեղադրվում են աշխատանքային տարածքների մոտ: LED լամպերը ունեն IP65 պաշտպանության աստիճան:

8.2. ՔՊ և ԱԻ-ՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

Հ/Հ	Միջոցառումը և թեման	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Կատարողներ	Մասնակից
I. ՆԳՆ ՓԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ					
1. Օպերատիվ տակտիկական պատրաստություն					
1 1 Հատուկ տակտիկական ուսումնավարժություն					
Մասնակցություն «Կարճ հաղորդագրություններով պաշտոնատար անձանց իրազեկում» թեմայով	Հուլիս	Համայնքապետարաններ, ՆԳՆ ՓԾ ՄՓՎ պետ			համապատասխան պաշտոնատար անձիք
2. Ընդհանուր պատրաստություն					
Մասնակցություն համայնքների ՔՊ հարցերով պատասխանատուների հետ սեմինար պարապմունքների անցկացմանը	Յուրաքանչյուր կիսամյակ	համայնքապետեր, ՆԳՆ ՓԾ ՄՓՎ պետ	ՆԳՆ ՓԾ ՄՓՎ ՔՊ բաժին		համապատասխան վարչություններ
3 Արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ					
Մասնակցություն գարնանային վարարումների և սելավների ռիսկերից բնակավայրերը, տնտեսական արժեք ներկայացնող տարածքները, գյուղատնտեսական հողատեսքերն ու բնակչության գույքը պաշտպանելու նպատակով անհրաժեշտկանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը	Մինչև23.02	համայնքապետեր ՆԳՆ ՓԾ ՄՓՎ պետ	ՆԳՆ ՓԾ ՄՓՎ ՔՊ բաժին		համապատասխան վարչություններ
Մասնակցություն համայնքներում առաջացած բնական բնույթի վտանգների ու վտանգավոր երևույթների ուսումնասիրության իրականացմանը, դրանց սպառնալիքի դեպքում կանխարգելիչ միջոցառումների իրականացման մասին առաջարկությունների ներկայացմանը	Տարվա ընթացքում	համայնքնապետ, ՆԳՆ ՓԾ ՄՓՎ պետ	ՆԳՆ ՓԾ ՄՓՎ ԲՊ բաժին		համապատասխան վարչություններ
Մասնակցություն ՀՀ կառավարության 10.11.2011թ. N 1582-Ն որոշման համաձայն՝ արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների մասին տվյալների ամփոփում, վերլուծում և տեղեկատվության ներկայացմանը	Յուրաքանչյուր ամսվա 28-ը՝ նախորդ ամսվա համար	համայնքնապետ, ՆԳՆ ՓԾ ՄՓՎ պետ	ՆԳՆ ՓԾ ՄՓՎ ՔՊ բաժին		համապատասխան վարչություններ
4. Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ					

Հ/Հ	Միջոցառումը և թեման	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Կատարողներ	Մասնակից
	Մասնակցություն ՆԳՆ ՓԾ ՄՓՎ տարածքային ստորաբաժանումների ծառայողների և մարզպետարանի կրթության և գիտության ոլորտի մասնագետների հետ կրթական հաստատություններում (դպրոցներում) պատանի (12-17 տարեկան) հրշեջ-փրկարարական խմբերի ստեղծման գործընթացին	Տարվա ընթացքում	համայնքնապետեր, ՆԳՆ ՓԾ ՄՓՎ պետ	դպրոցների տնօրեններ, ՆԳՆ ՓԾ ՄՓՎ ՀՓԱԿ բաժին	դպրոցների աշխատակազմներ,ՆԳՆ ՓԾ ՄՓՎ ՀՓՋ-ներ
	1 պատանի հրշեջ-փրկարարական Թիմերի միջև առաջնությունների կազմակերպում և անցկացում	Ապրիլ			
	2) Հանրապետական	Մայիս			
II.ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ					
5 Օպերատիվ տակտիկական պատրաստություն					
5.1 Հրամանատարաշտաբային ուսումնավարժություն					
5.2 Շտաբային ուսումնավարժություն					
5 3 Ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն					
5.4 Օբյեկտային վարժանք					
	Մարզի տարածքում գործող կազմակերպություններում օբյեկտային վարժանքների անցկացում	Տարվա ընթացքում	Համապատասխան կազմակերպության տնօրեն	Համապատասխան կազմակերպության ղեկավար կազմ	Համապատասխան կազմակերպության անձնակազմ, ՄՓՎ ՔՊ բաժին
5 5 Հատուկ տակտիկական ուսումնավարժություն					
	Մարզի տարածքում գործող կազմակերպություններում հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացում	Տարվա ընթացքում	Համապատասխան կազմակերպության տնօրեն	Համապատասխան կազմակերպության ղեկավար կազմ	Համապատասխան կազմակերպության կազմավորումներ,
	«Անձնակազմի և սաների տարահանման կազմակերպումը» թեմայով	03 06	Ազդակիր համայնքների կրթական հաստատություններ	ղեկավար կազմ	անձնակազմ և սաներ, ՄՓՎ ՔՊ բաժին
	«Անձնակազմի, այցելուների և նյութական արժեքների տարահանման կազմակերպումը» թեմայով	10 07	կազմակերպություններ	ղեկավար կազմ	անձնակազմ և այցելուներ, ՄՓՎ ՔՊ բաժին

Հ/Հ	Միջոցառումը և թեման	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Կատարողներ	Մասնակից
«Անձնակազմի և սաների պաշտպանությանկազմակերպումը» թեմայով		15 07	համակյքապետարաններ	ղեկավար կազմ	անձնակազմ, ՄՓՎ ՔՊ բաժին
	Էլեկտրաշչակի գործարկումով				
5.5.2 «Ազդարարում, պատսպարում» թեմայով տարահանում,		08.02	Հանայնքեր, բնակավայրեր	ղեկավար կազմ	համայնքային կազմավորումներ,ՄՓՎ ՔՊ բաժին
«Ազդարարում, պատսպարում» թեմայով տարահանում,		19.02	կազմակերպություններ	ղեկավար կազմ	Կազմակերպությունների կազմավորումներ, ՄՓՎ ՔՊ բաժին
«Ազդարարում, պատսպարում» թեմայով տարահանում,		02.04	Կրթական հաստատություններ	Ղեկավար կազմ	Անձնակազ, կազմավորումներ, ՄՓՎ ՔՊ բաժին
Օբյեկտում հատուկ տակտիկական ուսումնավարժությունների անցկացում		Տարվա ընթացքում	ՆԳՆ ՓԾ ՄՓՎ ՀՓՋ-ների հրամանտարներ	ՆԳՆ ՓԾ ՄՓՎ ՀՓՋ-ներ	շահագործող կազմակերպություն-ներ
Անձնակազմի և աշակերտների գործողությունները «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻՆ» ազդանշանի դեպքում թեմայով		04.03	Ազդակիր համայնքների կրթական հաստատություններ	Ղեկավար կազմ, զինղեկ	անձնակազմն աշակերտներ, ՄՓՎ ՔՊ բաժին
Անձնակազմի գործողությունները «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻՆ» ազդանշանի դեպքում թեմայով		04.03	Ազդակիր համայնքների կազմակերպություններ	Ղեկավար կազմ, ՔՊ պատասխանատուներ	անձնակազմն, ՄՓՎ ՔՊ բաժին
Անձնակազմի գործողությունները «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻՆ» ազդանշանի դեպքում թեմայով		04.03	Ազդակիր համայնքների համայքապետարաններ, տեղական ինքնակառավարման մարմիններ	Ղեկավար կազմ, ՔՊ պատասխանատուներ	անձնակազմն, ՄՓՎ ՔՊ բաժին

Հ/Հ	Միջոցառումը և թեման	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Կատարողներ	Մասնակից
6 Արտակարգ իրավիճակների կանխարգելման և հետևանքների վերացման ուղղությամբ					
	Օբյեկտի անվտանգության վկայագրերի փորձաքննության և ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացում	Տարվա ընթացքում	մարզպետ, ՄՓՎ պետ	ՄՓՎ ՔՊ բաժին	համապատասխան վարչություն
	Աշխատանքների իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվության ներկայացում ՄՓՎ	17.06 18.12		համապատասխան վարչություն	
	Ռիսկերից պաշտպանելու նպատակով կանխարգելիչ միջոցառումների իրականացում	Մինչև 01.03	համայնքապետ, ՄՓՎ պետ	ՄՓՎ ՔՊ բաժին	
8 Փրկարարական ուժերի պատրաստության բարձրացման ուղղությամբ					
	Փրկարարակն ուժերի վերապատրաստում վտանգների բնույթի և քանակի փոփոխություններին համապատասխան	Մինչև01.03	ՄՓՎ պետ	ՄՓՎ ՔՊ բաժին	համապատասխան վարչություն
9 Ընդհանուր պատրաստություն					
	Մարզի ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ հրամանատարական պատրաստության պարապմունքների անցկացում	23 02 17 05 19 07 04 10	համայնքապետեր, ՆԳՆ ՓԾ ՄՓՎ պետ	զորահավաքային հարցերի և ՔՊ վարչություն, ՄՓՎ բաժիններ	ՔՊ ծառայությունների շտաբի պետեր
	Հրամանատարական պատրաստության պարապմունքներ մարզի կազմակերպությունների ՔՊ շտաբի պետերի հետ	Առանձին հավելված 2-ի	Կազմակերպությունների տնօրեններ	զորահավաքային հարցերի և ՔՊ վարչություն, ՆԳՆ ՃԿԱԿ	Կազմակերպությունների ՔՊ շտաբի պետեր
10 Պլանների և ծրագրերի մշակում					
	ՆԳՆ ՓԾ ՄՓՎ և ենթակա ստորաբաժանումների հիմնական աշխատանքների կատարմանամփոփում	Մինչև05.01	մարզպետ ՆԳՆ ՓԾ ՄՓՎ պետ	ՏԻՄ, ՆԳՆ ՓԾ ՄՓՎ	Վարչական շրջանների ղեկավարներ, ՆԳՆ ՓԾ ՄՓՎ ստորաբաժանումներ
	Մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախա- պատրաստման հաջորդ տարվա հիմնական միջոցառումների պլանի մշակում	Մինչև 29.11	մարզպետ, ՆԳՆ ՓԾ ՄՓՎ պետ	ՆԳՆ ՓԾ ՄՓՎ	զորահավա-քային հարցերի և ՔՊ վարչություն

Հ/Հ	Միջոցառումը և թեման	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Կատարողներ	Մասնակից
«Մարզի բնակչության տարահանման պլան»-ի ճշգրտում		Մինչև 30.08	մարզպետ, ՆԳՆ ՓԾ ՄՓՎ պետ	ՄՓՎ ԲՊ և ՔՊ բաժիններ	Տարահանման հանձնաժողով, զորահավաքային հարցերի և ՔՊ վարչություն
Արտակարգ իրավիճակներում գործելու (աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու) պլանների ճշգրտում		Տարվա ընթացքում	մարզպետ, ՄՓՎ պետ	ՄՓՎ ԲՊ բաժին	Համապատասխան կազմակերպություններ

8.3. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

N N ը/կ	Ուսուցման ձևը	Անցկացման ժամկետը	Տևողությունը	Անցկացնող մարմինը	Ներգրավվող մարմինները և անձնակազմը
1.	Համալիր ուսումնավարժություն	3 տարին մեկ անգամ	4-5 օր	լիազորված մարմին	1. ՀՀ պետական կառավարման մարմիններ, արտակարգ իրավիճակների հանձնաժողովներ, տարահանման հանձնաժողովներ, քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ, փրկարար ուժեր, բնակչություն 2. ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ և կազմակերպություններ
2.	Հրամանատարաշտաբային ուսումնավարժություն	2 տարին մեկ անգամ	2-3 օր	լիազորված մարմին	1. ՀՀ պետական կառավարման մարմիններ, արտակարգ իրավիճակների հանձնաժողովներ, տարահանման հանձնաժողովներ, քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ, փրկարար

					ուժեր, բնակչություն 2. ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ և կազմակերպություններ
	Հրամանատա- րաշտաբայի ն ուսումնավա ր-ժություն	2 տարին մեկ անգամ	2-3 օր	ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ (քաղաքային համայնքներ), որոնց տարածքում տվյալ տարվա ընթացքում լիազորված մարմնի կողմից չի անցկացվել հրամանատարաշտա բային ուսումնավարժությու ն:	ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմեր, արտակարգ իրավիճակների հանձնաժողով, տարահանման հանձնաժողով, քաղաքացիական պաշտպանության ծառայություններ (առկայության դեպքում), ենթակա կազմակերպություններ
3.	Շտաբային ուսումնավա ր-ժություն	յուրաքանչյո ւր տարի՝ մեկ անգամ	1-2 օր	լիազորված մարմին ՀՀ պետական կառավարման հանրապետական մարմիններ՝ բացառությամբ ՀՀ պաշտպանության նախարարության ՀՀ ՆԳՆ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության	1. լիազորված մարմնի ենթակա ստորաբաժանումների ղեկավար կազմեր, պետական կառավարման մարմիններ, հանրապետական արտակարգ իրավիճակների հանձնաժողով, տարահանման հանձնաժողով, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետեր, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների հրամանատարներ 2. ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ղեկավար կազմեր ՀՀ պետական կառավարման հանրապետական մարմինների աշխատակազմեր, արտակարգ

					իրավիճակների հանձնաժողով, տարահանման հանձնաժողով, հրամանատարներ, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետեր, ենթակա տարածքային ստորաբաժանումների և կազմակերպությունների ղեկավար կազմեր
4.	Հատուկ տակտի-կական ուսումնա-վարժություն	յուրաքանչյուր տարի	2 օր	Կազմակերպություններ, որոնցում ստեղծված են քաղաքացիական պաշտպանության ծառայություններ, կազմավորումներ, հրշեջ և փրկարարական խմբեր: լիազորված մարմին	կազմակերպության քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ, հրշեջներ (առկայության դեպքում), կամավոր փրկարարներ, քաղաքացիական պաշտպանության ծառայություններ, կազմավորումներ (առկայության դեպքում) լիազորված մարմնի ուժեր, կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ, կազմակերպությունների փրկարար ուժեր (առկայության դեպքում), կամավոր փրկարարներ 1. լիազորված մարմնի ուժեր, ՀՀ պետական կառավարման մարմիններ 2. ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ, կազմակերպությունների փրկարար ուժեր

					(առկայության դեպքում), կամավոր փրկարարներ, ուսումնական հաստատություններ
7.	Դասախոսու-թյուն	ըստ լիազորված մարմնի կողմից մշակված պլանի	60 ր	բարձրագույն ուսումնական հաստատություններ, հանրա-կրթական դպրոցներ (որոնք ընդգրկված չեն լիազորված մարմնի կողմից տվյալ տարում անցկացվող հատուկ տակտիկական ուսումնավարժություններում)	ուսումնական հաստատությունների անձնակազմ 1. ՀՀ պետական կառավարման մարմինների անձնակազմեր 2. ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ, կազմակերպությունների անձնակազմեր ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ և ղեկավարի տեղակալներ՝ աշխատանքի նշանակվելիս, ՀՀ պետական կառավարման մարմինների ստորաբաժանումների և կազմակերպությունների ղեկավար կազմեր և անձնակազմեր քաղաքացիական պաշտպանության կազմավորումների հրամանատարներ
	Դասախոսու-թյուն	յուրաքանչյուր տարի	60 րոպե	Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների հրամանատարներ, քաղաքացիական պաշտ-պանության շտաբների պետեր, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետեր լիազորված մարմնի ուսումնական հաստատություն	Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմեր աշխատող բնակչության կազմից նշանակված ուսումնական խմբի ղեկավարներ աշխատող բնակչության կազմից նշանակված ուսումնական խմբի անձնակազմ քաղաքացիական պաշտպանության ամբիոնի

				աշխատող բնակչության կազմից նշանակված ուսումնական խմբի ղեկավարներ լիազորված մարմնի ուսումնական հաստատություն	դասախոսներ քաղաքացիական պաշտպանության ամբիոնի դասախոսներ՝ աշխատանքի անցնելուց հետո միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների դասախոսներ հանրակրթական դպրոցների ուսուցիչներ և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ռազմագիտության ուսուցիչներ Նախադպրոցական հաստատությունների ղեկավարներ

9. ՎԹԱՐԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ և ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման և առօրյա պայմաններում բնակչությանը մասնագիտացված օգնություն ցույց տալու նպատակով ստեղծվում են փրկարար ուժեր, որոնք մշտական պատրաստվածության վիճակում են, ընդգրկում են պետական, հասարակական ու գերատեսչական փրկարարական մասնագիտացված կազմավորումները և արտակարգ իրավիճակներում գործում են կենտրոնացված կառավարման սկզբունքով, արդարացված ռիսկի շրջանակներում:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական և անհետաձգելի վերականգնողական աշխատանքներ կատարելիս փրկարարները կարող են՝

- անարգել մուտք գործել ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների տարածքները, իսկ բացառիկ դեպքերում՝ նաև քաղաքացիների բնակարանները.
- բացել փակ դռները, պատուհանները, քանդել ցանկապատերը, շինությունները, եթե դրանց առկայությունը խոչընդոտում է փրկարարական աշխատանքների կատարմանը կամ կարող է առաջացնել ծանր հետևանքներ:

Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առաջացած արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման աշխատանքներում փրկարար ուժերն ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Փրկարար ուժերի կարգավիճակը, փրկարարների, նրանց ընտանիքների, ինչպես նաև փրկարարական աշխատանքներում ընդգրկված ոչ փրկարար քաղաքացիների սոցիալական ապահովության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Փրկարարական աշխատանքների հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Փրկարարների կատարած ապօրինի գործողությունների, ինչպես նաև պետական և ծառայողական կամ առևտրային գաղտնիքի հրապարակման համար նրանց պատասխանատվությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Վնասման օջախում կատարվում են աշխատանքների երկու հիմնական տեսակ՝ փրկարար և անհետաձգելի վթարային-վերականգնման:

<u>Փրկարար</u> աշխատանքներին վերաբերում են՝ վնասվածների որոնումը, նրանց

առաջին բժշկական օգնություն ցույց տալը, տուժածների դուրս բերումը վնասման օջախից, հրդեհների տեղայնացումը և մարումը, փլատակների տակ մնացածներին օդ մատակարարելը, մարդկանց դուրս բերումը փլատակներից, հրդեհի օջախներից մարդկանց փրկելը վառվող շենքերից:

Վերականգնման աշխատանքներին վերաբերվում են՝ հակահրդեհային հատվածաշերտերի կառուցումը, շարասյունային ճանապարհների անցկացումը, փլվածքների միջով և վրայով կառանցների սարքավորումը, կոմունալ-էներգետիկ տնտեսության ցանցերում վթարների տեղայնացումն ու վերացումը, տերիտորիաների, շինությունների, տրանսպորտի ու տեխնիկայի վարակազերծումը և անհետաձգելի ուրիշ աշխատանքների կատարումը:

Աշխատանքների ամբողջ կոմպլեքսից առաջին հերթին կատարվում են այն աշխատանքները, որոնցից անմիջականորեն կախված է մարդկանց փրկելը կամ նրանց անվտանգությունը: Վնասման օջախի սանիտարական մաքրումը, արժեքների հավաքումը, հաշվառումն ու պահպանումը, որպես կանոն, կատարում են փրկարար աշխատանքների ավարտից հետո: Սակայն այդ աշխատանքների որոշ մասը, ուժերի ու միջոցների բավակա-նաչափ քանակի առկայության դեպքում, կարող է կատարվել փրկարար աշխատանքների հետ միաժամանակ:

Փրկարար և վերականգնման աշխատանքները կատարվում են միաժամանակ վնասման օջախի ամբողջ տերիտորիայի վրա շրջամասից դեպի կենտրոն, անընդհատ և շուրջօրյա, մինչև դրանց լրիվ ավարտը:

Փրկարար և վերականգնման աշխատանքների հաջող կատարման և ավելի լավ կազմակերպման համար վնասման օջախի ամբողջ տերիտորիան բաժանում են աշխատանքների շրջանների, տեղամասերի և օբյեկտների:

Աշխատանքների շրջանն ընդգրկում է վնասման օջախի տերիտորիայի մի մասը, որը կազմված է աշխատանքների մի քանի տեղամասերից: Նրանում կարող են աշխատել մի քանի կազմավորումներ: Այդ կազմավորումները միավորվում են մեկ պետի հրամանատարության տակ:

Աշխատանքների տեղամասը կազմված է աշխատանքների մի քանի օբյեկտներից, որտեղ աշխատում է որևէ մեկ կազմավորում, որի հրամանատարը աշխատանքների տեղամասի պետն է հանդիսանում:

Աշխատանքների օբյեկտն այն տեղն է, որտեղ աշխատանք է կատարում ստորաբաժանումը (խմբակը, օղակը): Աշխատանքների օբյեկտի պետ է հանդիսանում ստորաբաժանման (խմբակի, օղակի) հրամանատարը:

Օբյեկտում մարդկանց փրկելը և վթարների վերացումը կազմակերպում է օբյեկտի

քաղաքացիական պաշտպանության պետը հարձակումից անմիջապես հետո: Դրա համար նա ներգրավում է կազմակերպումները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օբյեկտի բոլոր բանվորներին ու ծառայողներին, որոնք չեն տուժել հարձակման ժամանակ:

Վնասմնան օջախում տուժածներին փրկելու խնդիրների հաջող լուծումը ձեռք է բերվում առաջին հերթին փրկարար աշխատանքները վարելու համար ուժերի և միջոցների արագ բացազատմամբ: Այս նպատակով բոլոր կազմավորումները և առաջին հերթին փրկարար, վթարային-տեխնիկական, հրշեջ, բժշկական կազմավորումները անհապաղ ձեռնարկում են տուժածների փրկումը: Աշխատանքները սկսվում են չսպասելով հետախուզության լրիվ տվյալների ստանալուն: Առաջինը փրկարար աշխատանքների մեջ ներգրավվում են քաղաքում և օբյեկտներում պահպանված կազմավորումները (աշխատող հերթափոխների բանվորներն ու ծառայողները): Այնուհետև տարվող աշխատանքների տեմպը աճում է այլ համայնքներից հասնող ուժերի օգնության համար ժամանող կազմավորուրմների հաշվին:

Չափազանց կարևոր է փրկարար աշխատանքները կատարել շատ կարճ ժամկետներում: Դրա համար անհրաժեշտ է ձգտել հնարավորին չափով շուտ օդ մատակարարել փլված կամ վնասված ապաստարաններին, առաջին բժշկական օգնություն ցույց տալ վնասվածներին, տեղայնացնել հրդեհները: Այդ պատճառով աշխատանքները պետք է կատարվեն հերթափոխերով, անընդհատ, գիշեր և ցերեկ: Հերթափոխների աշխատանքի տևողությունը սահմանում է կազմավորման հրամանատարը, ելնելով իրադրությունից:

Հիմնական ուժերն ու միջոցները օգտագործում են քաղաքի, օբյեկտի տերիտորիայի առավել կարևոր տեղամասերում, որտեղ կարող է գտնվել տուժածների մեծ մասը:

Վնասման օջախում աշխատանքները կատարվում են մեխանիզացիայի տեղական միջոցների օգտագործմամբ և միայն դրանց բացակայության դեպքում՝ ձեռքի ուժով: Ձեռք են առնվում բոլոր միջոցները, որպեսզի տեխնիկայի միջոցներն աշխատանքի վայրը հասցվեն ժամակին և ապահովվեն վառելանյութով:

10. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ և ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Օրենքից բխող՝ աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության գործողությունների իրականացման նյութատեխնիկական ապահովումն ու ֆինանսավորումը կատարվում է ՀՀ պետական և համայնքային բյուջեից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը 05.03.2002թ.
2. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ Օրենք, ընդունված 02.012.1998թ
3. «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին», N592, 8.09.2000թ.
4. Բնակչությանն անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարությ,ան N 679, 25.10.2000թ. որոշում
5. Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 10 ապրիլի 2003 թվականի N 384-Ն որոշում
6. «ՔՊ պլանների մշակման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 633, 22.04.2004թ և N 1187-ն, 26.08.2010թ. որոշում
7. «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1180-ն, 18.08.2011թ. որոշում
8. Քաղաքացիական պաշտպանության փրկարար ուժերի ստեղծման, պատրաստման և մշտական պատրաստվածության ապահովման կարգը սահմանելու մասին», ՀՀ կառավարության 22 սեպտեմբերի 2011 թվականի N 1431-Ն որոշում
9. Հավելված N 1 ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 1717 - Լ որոշման Աղետների ռիսկի կառավարման 2023-2030 թվականների ռազմավարություն
10. «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության եվ քաղաքացիական պաշտպանության ոլորտներում հայաստանի հանրապետության պետական կառավարման եվ տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման եվ տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու» ՀՀ կառավարության որոշում 22 հունվարի 2015 թվականի N 46-Ն:

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

«ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Լիցենզիա № ՔՊԼ-001233 առ 23.09.2024թ.

Պատվիրատու – «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ 43/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՏԵՌՈՐԻՍՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1-013-25 ՏԱՊ

Հատոր 7

Տնօրենի տեղակալ- գլխավոր ճարտարագետ՝		Հ. Իսպիրյան
ՆՀԲ պետ		Գ. Ալավերդյան
Նախագծի գլխավոր ճարտարագետ՝		Ա. Վարդանյան

2025

Գրքի, հատորի համար	Նշանակումը	Անվանումը	Ծանոթություն
Օբյեկտ՝ **«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Թբիլիսյան խճուղի 43/2 հասցեում գտնվող շենքի հիմնանորոգում**			
Աշխատանքային նախագիծ			
1	ԸԲ	Ընդհանուր բացատրագիր	
2	**ՃՇ**	**Ճարտարապետաշինարարական մաս**	
2.1	Ճ	Ճարտարապետական լուծումներ	
2.2	ԵԿ	Կոնստրուկտիվ լուծումներ	
3	**ԻՑՍ**	**Ինժեներական ցանցեր և սարքավորումներ**	
3.1	ԷՄ	Էլեկտրամատակարարման համակարգ	
3.2	ՀԱ Կ ՊԱ	Հրդեհային ազդանշանում Հեռահաղորդակցման համակարգեր Պահպանության տեսահսկման և ազդանշանային համակարգ	
3.3	Գ	Գազամատակարարում	
3.4	ՋԿ	Ջրամատակարարման և կոյուղու համակարգեր	
3.5	ՋՕ	Ջեռուցում և օդափոխություն	
4	ՀԱ	Հրդեհային անվտանգության միջոցառումներ	
5	ԱՊ	Աշխատանքի պայմաններ և կազմակերպում	
6	ՔՊ և ԱԻ	Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ	
7	ՏԱՊ	Տեռորիստական ակտերի դեմ պայքարի միջոցառումներ	
8	Ն	Շինարարական աշխատանքների նախահաշիվ	

Согласовано

Взам. инв. №

Подп. и дата

Инв. № подл.

Փոփ	Մասն	Թերթ	№աստ	Ստորգ.	Ամ.ա	1-013-25 ՆԿ		
ՆԳՃ		Վարդանյան			05.2025	Նախագծի կազմը	Փուլ	Թերթ	Թերթեր
							ԱՆ	1	1
							Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ		

Բովանդակություն

Օգտագործվող հիմնական հասկացությունները 7
1. Ելակետային փաստաթղթեր.....6
2. Օբյեկտի նկարագիրը 9
2.1. Ընդհանուր տեղեկություններ 9
2.2. Վերակառուցվող օբյեկտի տեխնիկական սարքերի, սարքավորումների, շենքերի ԵՎ շինությունների անվտանգության ապահովման պահանջների ապահովման միջոցառումները.....13
2.2.1. Տեխնիկական սարքերին ներկայացվող պահանջներ.....13
2.2.2. Տեխնիկական սարքերի ԵՎ սարքավորումների անվտանգության պահանջների ապահովում 13
2.2.3. Շենքերի, շինությունների ԵՎ շինությունների անվտանգության ապահովում պահանջներ 14
2.2.4. Տեղեկատվություն աշխատողների հաշվարկային թվաքանակի, աշխատատեղերի ԵՎ դրանց հագեցվածության մասին 15
3. Կապիտալ շինարարության օբյեկտի հակաահաբեկչական պաշտպանության կազմակերպման պահանջները 16
4. Կապիտալ շինարարության օբյեկտի հակաահաբեկչական պաշտպանության կազմակերպման պահանջները 18
4.1. Ընդհանուր դրույթներ.....18
4.2. Մուտքի հսկողության կազմակերպման պահանջները.....20
4.3. Կանխարգելիչ ԵՎ ուսումնամարզական գործունեության կազմակերպման պահանջները.....21
4.4. Ահաբեկչական միջադեպերին արձագանքելու, ինչպես նաԵՎ տեխնածին սպառնալիքների վերացման հարցերում համագործակցության կազմակերպման

Согласовано

Взам. инв. №

Подп. и дата

Инв. № подл.

						1-013-25 ՏԱՊ	
				Ստոր.	Ամս.		
ՆԳՃ		Վարդանյան			03.25	Տեռորիստական ակտերի դեմ պայքարի միջոցառումներ	Փուլ: Р; Թերթ: 1; Թերթեր:
Նախագծող		Սարգսյան					«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ

պահանջները, որոնք առաջացել են ահաբեկչական գործողության հետԵվանքով 24
5. օբյեկտը ինժեներատեխնիկական սարքավորումներով հագեցնելու պահանջները 26
Հավելված 1 31
Հավելված 2 32
Հավելված 3 34
Հավելված 4 38
Հավելված 5 42
Հավելված 6 45
Հավելված 7 47
Օգտագործված գրականություն 50
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 51
Լիցենզիա 52

1. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

– «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 21.08.2024թ. №Ն/29/36146-2024 գրություն
– Երևանի ԳԳՄ կողմից 02.12.2024թ. տրամադրված 293/24 գազիֆիկացման տեխնիկական պայմաններ
– Մասնաշենքի տեխնիկական վիճակի գնահատման եզրակացություն՝ տրված «Սեյսմաէքսպերտ» ՍՊԸ կողմից:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) **ահաբեկչական գործողություն**՝ ահաբեկչական բնույթի հանցագործության անմիջական կատարում՝ պայթյունի, հրկիզման, միջուկային պայթուցիկ տարրերի, ռադիոակտիվ, քիմիական, կենսաբանական, պայթուցիկ, թունավորող, ուժեղ ներգործող նյութերի կիրառման կամ դրա սպառնալիքի, տրանսպորտային միջոցների կամ այլ օբյեկտների ոչնչացման, վնասման կամ զավթման, պետական կամ հասարակական գործչի, ազգային, էթնիկական, կրոնական կամ բնակչության այլ խմբերի ներկայացուցչի կյանքի դեմ ոտնձգության, պատանդների վերցման, մարդու առևանգման, տեխնոգեն բնույթի վթարների և աղետների համար պայմաններ ստեղծելու ճանապարհով անորոշ շրջանակի անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս հասցնելու նպատակով վտանգ ստեղծելու կամ այդպիսի վտանգի ստեղծման իրական սպառնալիքի, ցանկացած ձևի և ցանկացած միջոցներով սպառնալիքների տարածման, մարդկային զոհերի, զգալի գույքային վնաս հասցնելու կամ հասարակական վտանգավոր հետևանքներ առաջացնող այլ գործողությունների միջոցով.

2) **ահաբեկչական գործունեություն**՝ ահաբեկչական գործողության կազմակերպում, նախապատրաստում և իրականացում, ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների նկատմամբ բռնության, ահաբեկչական նպատակներով նյութական օբյեկտների ոչնչացման հրահրում, ահաբեկչական գործողություն կատարելու համար անօրինական զինված կազմավորման, հանցավոր խմբավորման կազմակերպում, ինչպես նաև մասնակցություն այդպիսի գործողությանը, ահաբեկիչների հավաքագրում, զինում, ուսուցանում, ահաբեկչական կազմակերպության կամ ահաբեկչական խմբի ֆինանսավորում կամ այլ աջակցություն.

3) **ահաբեկիչ**՝ ահաբեկչական գործողություն, ահաբեկչական գործողության նախապատրաստում կամ դրա կատարման փորձ կատարած անձ.

4) **ահաբեկչության դեմ պայքար**՝ ահաբեկչական գործունեության բացահայտմանը, կանխմանը, խափանմանը, հետևանքների նվազեցմանն ուղղված գործունեություն.

5) **հակաահաբեկչական գործողություն**՝ ահաբեկչական գործողության բացահայտմանը, կանխմանը, ինչպես նաև պետության շահերի և ֆիզիկական անձանց անվտանգության ապահովմանը, ահաբեկիչների վնասազերծմանը և ահաբեկչական գործողությունների հետևանքների նվազեցմանն ուղղված հատուկ միջոցառումներ.

6) **հակաահաբեկչական գործողության իրականացման գոտի**՝ տեղանքի առանձին հատվածներ, տրանսպորտային միջոց, շենք, շինություն, կառույց և դրանց հարող տարածքներ, որոնց սահմաններում անցկացվում է նշված գործողությունը. 7)

պատանդ՝ պետությանը, կազմակերպությանը կամ առանձին անձանց որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով առևանգված կամ պահվող անձ։

2. ՕԲՅԵԿՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերակառուցվող շինությունը գտնվում է ՀՀ Քաղաք Երևան, Արաբկիր վարչական շրջան, Թբիլիսյան խճուղի 43/2 հասցեյում: Կադաստրային ծածկագիրը (01-003-0402-0294):

Հողամասում գոյություն ունի արտադրամաս, բաղկացած մեկ կիսանկուղային հարկից և երկու վերնահարկից: Արտադրամասի արտաքին չափերն են 13.00 մ x 30.00 մ: Բարձրությունը 12.00 մ: Տանիքը միալանջ է, թիթեղյա, կազմակերպված ջրահեռացմամբ:

Նկար 3.1. Վերակառուցվող օբյեկտի իրավիճակային պլանը

Արտադրամասին կից առկա է 84.00 քմ մակերեսով միահարկ կցակառույց, որը նախատեսվում է քանդել:

Արտադրամասը տեղակապված է հողամասի անմիջապես սահմանով: Շենքը կազմված է ե/բ կմախքից, պատի պանելներից և ծածկի պանելներից: Շենքի կիսանկուղային հարկից առկա է ելք դեպի կողքի հողամաս, որը նույնպես հանդիսանում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ - ի սեփականություն: Ներկայումս շենքն ունի թվով 2 մուտքեր, որոնք գտնվում են հողամասի սահմանից դուրս:

Նկար 2.2. Վերանորոգվող օբյեկտի հատակագիծը

Նախագծով նախատեսվում է.

1. Ապամոնտաժել շենքին կից միահարկ կցակառույցը,
2. Ապամոնտաժել շենքի տանիքը,
3. Ապամոնտաժել շենքի պատի պանելները և գոյություն ունեցող պատուհանները,
4. Ապամոնտաժել գոյություն ունեցող հողամասի սահմանից դուրս գտնվող թվով 2 մուտքերը,
5. Ապամոնտաժել շենքի ներքին բոլոր պատերը, թողնել միայն ե/բ կմախքը,
6. Կառուցել կցակառույց վերակառուցվող շենքին կից,
7. Արտաքին պատերը շարել ե/բ ծածկի վրա, պատի պանելների փոխարեն, ինչի արդյունքում շենքի արտաքին մակերեսը կփոքրանա և շինության արտաքին պատերը հողամասի սահմանից կհեռանան ամենաքիչը 100 մմ -ով,
8. Պատերը նախատեսվում է շարել 200 մմ հաստությամբ, տուֆով կամ բետոնե բլոկերով, արտաքինից ջերմամեկուսացնել և երեսապատել բնական քարով

կամ սվաղ-ներկով,

9. Շենքի կցակառույցից նախատեսել գլխավոր մուտքը, 600մմ բարձր ասֆալտի նիշից, աստիճաններով և ԲՄԽ - ների համար աստիճան բարձրացնող էլեկտրական սարքով,
10. Մյուս մուտքը նախատեսել կիսանկուղային հարկից, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի սեփականություն հանդիսացող կից հողամասի տարածքից, կառուցելով 1500 մմ լայնությամբ դեպի 0.00 նիշ իջնող աստիճան,
11. Շարել ներքին պատերը նախագծով նշված հատվածներում,
12. Պահպանել գոյություն ունեցող աստիճանները,
13. Շենքի տանիքը նախատեսել հարթ, կազմակերպված ջրահեռացմամբ, կցակառույցից նախատեսել ելք դեպի հարթ տանիք սպասարկման համար,
14. Շենքը երեսապատել տրավերտինով, բազալտով, տուֆով,սվաղով և ներկով (նախագծով նշված հատվածներում),

Շենքը ծառայելու է որպես արտադրական և գնասենյակային նշանակության շինություն: Ներսում նախատեսվում է տարածքը բաժանել.

-1 հարկ.

1. Նախատեսվում է -1 հարկը բաժանել արտադրականն սենքերի, պահեստասենյակների, որտեղ պահվելու են մետաղական խողովակներ, դետալներ և գործիքներ,
2. Նախատեսվում է ունենալ 2 սանհանգույց, լոգարաններով:
3. Արտադրական սենք 1 ում և 2 ում նախատեսվում է ունենալ պատուհաններ, վերևում տեղադրված:

1-ին հարկ.

1. Կցակառույցում անմիջապես մուտքի դիմաց նախատեսել պահակակետ,
2. Տվյալ հարկի մնացած հատվածը բաժանել աշխատասենյակների,
3. Իրականացնել տղամարդկանց սանհանգույց, թվով 2-ը, իսկ որպես կանացի սանհանգույց կարող է ծառայել ԲՄԽ-ների համար նախատեսված սանհանգույցը , որն ունի 1.65x1.8մ ներքին չափեր,
4. Միջանցքները նախատեսվում է անջատել աստիճաններից համապատասխան առանձին միջանցքներով:

2-րդ հարկ

1. 2-րդ հարկում նույնպես նախատեսվում է տարածքը բաժանել աշխատասենյակների, նշված հատվածներում ապակեպատումներով առանձնացված,

2. Սանհանգույցների հատվածում կրկնել 1-ին հարկի դասավորվածությունը։

3-րդ հարկ

1. Նախատեսվում է 3-րդ հարկում ունենալ թվով 2 տեխնիկական սենյակ,
2. Միջանցքից նախատեսել ելք դեպի հարթ տանիք, սպասարկումը ապահովվելու համար,
3. Տանիքի պարապետերը նախատեսել 1200 մմ բարձրությամբ։
4. Կցակառույցի տանիքը նույնպես նախատեսել հարթ, դեպի վերակառուցված շենքի տանիք ջրահեռացմամբ։

Վերակառուցման արդյունքում նախատեսվում է առաստաղների մաքուր բարձրությունը ունենալ 2800մմ, իսկ բոլոր միջանցքների և անցուղիների լայնությունները ամենաքիչը 1800մմ։ Շենքում նախատեսվող աշխատողների քանակը - 1 հարկում 6 հոգի է, 1-ին հարկում աշխատելու են ընդհանուր թվով 15 հոգի, իսկ 2-րդ հարկում նախատեսվող աշխատողների քանակը նույնպես 15 հոգի։

2.2. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ՕԲՅԵԿՏԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2.2.1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Վերակառուցվող օբյեկտում օգտագործվող (շահագործվող) տեխնիկական սարքերը արտադրվում են այն կազմակերպությունների կողմից, որոնք ունեն անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և որակյալ մասնագետներ՝ նախագծային փաստաթղթերին համապատասխան՝ հաշվի առնելով գիտության և տեխնիկայի ձեռքբերումները և արդյունաբերական անվտանգության պահանջները: Տեխնիկական սարքերի արտադրության մեջ իրականացվում է արտադրված արտադրանքի որակի հսկողություն և դրանց համապատասխանությունը տեխնիկական փաստաթղթերին, բաղադրիչների և նյութերի մուտքային որակի հսկողություն, ինչպես նաև արտադրված արտադրանքի վերաբերյալ բողոքների գրանցման և վերացման սահմանված ընթացակարգերի պահպանում: Տեխնիկական սարքի տեխնիկական փաստաթղթերում, ներառյալ օտարերկրյա, արտադրողը (մատակարարը) կազմակերպությունը նշում է անվտանգ շահագործման պայմաններն ու պահանջները, այս սարքի և դրա հիմնական բաղադրիչների հսկողության փորձարկումների (ստուգումների) անցկացման մեթոդաբանությունը, ծառայության ժամկետը և սպասարկումը, կենսունակությունը, պահպանման և վերանորոգման և ախտորոշման կարգը:

Տեխնիկական սարքերը ենթակա են պահպանման՝ դրանց օգտագործման ողջ ժամանակահատվածում: Տեխնիկական սարքը լավ վիճակում պահելու համար կանխարգելիչ սպասարկման շրջանակը և ժամկետները որոշվում են այս սարքի տեխնիկական փաստաթղթերում: Վերակառուցվող օբյեկտը շահագործող կազմակերպությունը կազմակերպում է նշված սարքերի տեխնիկական սպասարկման աշխատանքները և վերահսկում դրանց իրականացումը: Վերակառուցվող օբյեկտում տեխնիկական սարքերը վերանորոգելիս և կարգավորելիս երաշխավորվում է, որ այդ աշխատանքը կատարվում է համապատասխան կանոնակարգերի պահանջների հիման վրա, ինչպես նաև վերանորոգման և ճշգրտման աշխատանքների պլանավորման, որակի վերահսկման և գրանցման սահմանված ընթացակարգերի պահպանմամբ:

2.2.2. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Մեքենայի կամ սարքավորման արտադրության ընթացքում ապահովվում են տեխնիկական կանոնակարգերին համապատասխան նախագծային փաստաթղթերով սահմանված անվտանգության պահանջները՝ հաշվի առնելով կիրառվող տեխնոլոգիական գործընթացները և կառավարման համակարգերը:

Արտադրողն իրականացնում է մեքենաների և սարքավորումների ռիսկերի գնահատում մինչև դրանք Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ դնելը:

Մեքենայի կամ սարքավորման արտադրողը մեքենային և սարքավորումներին տրամադրում է շահագործման հրահանգներ:

Գործողությունների ցանկն ուղղված է պահանջներին բավարարելուն.

- արդյունաբերական անվտանգություն;
- ջերմային անվտանգություն;
- էլեկտրական անվտանգություն;
- պայթյունի անվտանգություն;
- հրդեհային անվտանգություն;
- մեխանիկական անվտանգություն;
- ճառագայթային անվտանգություն;
- կառավարման համակարգի անվտանգություն;
- Վերակառուցվող տարածքներ;
- Վերակառուցվող տեղամասերին և Վերակառուցվող ձեռնարկության տարածքին.

2.2.3. ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՀՀ ՇՆ I-3.01.01-2008 սահմանում է շենքերի և շինությունների, ցանցերի և ինժեներական աջակցության համակարգերի, ինչպես նաև նախագծային գործընթացների համար անհրաժեշտ նվազագույն պահանջները.

- մեխանիկական անվտանգություն;
- հրդեհային անվտանգություն;
- անվտանգություն բնական վտանգավոր գործընթացների և երևույթների և (կամ) տեխնածին ազդեցությունների ժամանակ.
- անվտանգ կենսապայմաններ մարդու առողջության և շենքերում և շինություններում մնալու համար.
- անվտանգություն շենքերի և շինությունների օգտագործողների համար.
- շենքերի և շինությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց և սահմանափակ շարժունակությամբ բնակչության այլ խմբերի համար.
- շենքերի և շինությունների էներգաարդյունավետություն.
- Շենքերի և շինությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության անվտանգ մակարդակը:

Նախագծային փաստաթղթերը պետք է օգտագործվեն որպես հիմնական փաստաթուղթ շենքի կամ կառույցի շահագործման ցիկլի բոլոր հետագա փուլերում շենքի կամ շինության անվտանգության ապահովման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

2.2.4. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աշխատակիցների քանակը որոշվում է սպասարկող անձնակազմի համալրման ժամանակացույցին համապատասխան՝ ըստ աշխատատեղերի և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության գործող նորմերը, կանոնները և աշխատանքային օրենսդրությունը:

Աշխատողների մասնագիտական և որակավորման կազմը որոշվում է «Մի շարք դասակարգիչներ հաստատելու մասին» ՀՀ կառավարության 07.02.2013թ-ի N 141-Ն որոշմանը, աշխատաիցների որակավորման և անվտանգության կանոնակարգերի պահանջների համաձայն:

Ըստ հարկերի անձնակազմի բաշխումը

Հարկը	Աշխատակիցների քանակը
1	6
2	15
3	15

3. ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՀԱԿԱՀՐՇԱԲԵԿՉԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հակահրշեջային միջոցառումների նպատակները

Հրշեջության դեմ պայքարի կազմակերպումը նպատակաուղղված է՝

1. հրշեջային գործունեության նախազգուշացմանը, բացահայտմանը, կանխմանը, խափանմանը և դրա հետևանքների նվազեցմանը.
2. հրշեջությունից անձի, հասարակության և պետության պաշտպանությանը.
3. հրշեջային գործունեությանը նպաստող պատճառների ու պայմանների բացահայտմանը և վերացմանը:

